An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐՆԵՐԻ
ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

*ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Երևան 2001

*Ամառային դպրոցի կազմակերպիչները և մասնակիցները իրենց խորին երախտագիտությունն են հայտնում ԱՄՆ Պետական Դեպարտամենտի Կրթության և Մշակույթի Գործոց Բյուրոյին և ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնին՝ ցուցաբերած աջակցության համար:*

## *Ուսումնական նյութերի կազմմանը մասնակցել են՝*

**Թեմա 1.** Գ.Մ.Թադևոսյան, ս.գ.թ., ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ,
**Թեմա 2.** Ա.Կ.Խաչատրյան, փ.գ.թ., ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ,
**Թեմա 3.** Ն.Մելքոնյան, ՀՀԳԱ Իրավունքի և փիլիսոփայության ինստիտուտի ասպիրանտ,
**Թեմա 4.** Մ.Ռ.Հովհաննիսյան, ս.գ.թ., ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ,
**Թեմա 5.** Ս.Ս.Մուրադյան, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
**Թեմա 6.** Մ.Ի.Զասլավսկայա, մ.գ.թ, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ

***Խմբագիր՝***
*Գոհար Թադևոսյան*

***Ձևավորող՝***
*Վլադիսլավ Գրիգորյան*

**Ուսումնական նյութերը նախատեսված են սոցիալական հետազոտություններում մասնակցող հարցազրուցավարների համար:**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


***1. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ***
1. Հիմնական հասկացությունների սահմանում . . . . . 5
2. Հետազոտական գործընթացի փուլերը . . . . . 5
3. Սոցիոլոգիական հետազոտությունների դասակարգումը . . . . . 6
4. Սոցիոլոգիական հետազոտության ծրագրի կազմում . . . . . 10
5. Էթիկական խնդիրները սոցիոլոգիական հետազոտություններում . . . . . 10
6. Որակական հետազոտությունների առանձնահատկությունները . . . . . 11
7. Որակական տվյալների վերլուծության փոխազդող մոդել . . . . . 18

***2. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ***
1. Սոցիոլոգիայում դիտարկման մեթոդի կիրառման պատմությունը . . . . . 21
2. Սոցիոլոգիական դիտարկման առանձնահատկությունները . . . . . 21
3. Դիտարկում և եզրակացություններ . . . . . 22
4. Դիտարկման կիրառումը սոցիոլոգիական հետազոտությունների ժամանակ . . . . . 23
5. Դիտարկման պլանավորում . . . . . 24
6. Դիտարկումների ծրագիր . . . . . 25
7. Դիտարկվող օբյեկտի գործառնման իրավիճակների և պայմանների որոշումը . . . . . 26
8. Դիտարկման առարկայի որոշումը . . . . . 26
9. Դիտարկվող հայտանիշի և դիտարկման միավորի ընտրությունը . . . . . 27
10. Հասկացությունների սահմանումը և կատեգորիաների մշակումը . . . . . 27
11. Դիտարկման տեսակները . . . . . 28
12. Դիտարկման տեսակի որոշումը . . . . . 31
13. Արդյունքների գրանցում . . . . . 32
14. Դիտարկողին վերաբերվող պահանջները . . . . . 32
15. Դիտարկման ընթացքում առաջացող էթիկական խնդիրները . . . . . 32

***3. ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ***
1. Որակական հարցազրույցի էությունը . . . . . 34
2. Որակական հարցազրույցի վարման փուլերը . . . . . 36
3. Հարցերի տեսակները որակական հարցազրույցում . . . . . 37
4. Որակական հարցազրույցի տեսակները . . . . . 37
5. Խորհուրդներ հարցազրուցավարներին . . . . . 37



An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

*4. ՈՐԱԿԱԿԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ. ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՄԵԹՈԴ*
1. Խմբային հարցազրույցի մեթոդը սոցիոլոգիական մեթոդների համատեքստում: .......... 42
2. Ֆոկուս խմբերի ձևավորման սկզբունքները. .......... 43
3. Ֆոկուս խմբերի կազմակերպումը .......... 43
4. Խմբի մասնակիցների ընտրության չափանիշները .......... 44
5. Ֆոկուս խմբի քննարկման հարցաշարը .......... 44
6. Մոդերատորի նկատմամբ առաջադրվող պահանջները .......... 45
7. Ֆոկուս խմբի մասնակիցների դերերն հարցազրույցի ընթացքում .......... 46
8. Խմբային գործընթացը ղեկավարելու տեխնիկաներ .......... 46
9. Ֆոկուս խմբերի վերլուծություն և հաշվետվության պատրաստում .......... 47

*5. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ*
1. Ստանդարտացված հարցազրույցի սահմանումը և կիրառումը սոցիալական հետազոտություններում .......... 48
2. Հարցաթերթը և դրա դերը ստանդարտացված հարցազրույցում .......... 50
3. Հարցազրույցի սկիզբը .......... 54
4. Հարցազրույցի ժամանակ առկա դերերը .......... 56

*6. ԸՆՏՐԱՆՔԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*
1. Հիմնական գաղափարների սահմանումները .......... 61

# ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

## 1. Հիմնական հասկացությունների սահմանում

*Սոցիոլոգիական հետազոտությունը դա գիտական մոտեցումների և սկզբունքների վրա հիմնված սոցիալական իրականության մասին նոր գիտելիքների ստացման գործընթաց է:*

Սոցիոլոգիական հետազոտություններն անց են կացվում տարբեր նպատակներով. ոմանք փնտրում են պրակտիկ պատասխաններ, ոմանք ցանկանում են հիմնավորված որոշումներ կայացնել, ոմանք էլ ուզում են բարելավել հասարակությունը:

*Մեթոդաբանությունը դա գիտական հետազոտության սկզբունքների համակարգ է:*

*Մեթոդը տվյալների հավաքման, մշակման և վերլուծության հիմնական միջոցն է:*

*Տեխնիկան այս կամ այն մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ հատուկ հնարքների ամբողջություն է:*

*Մեթոդիկան որոշակի մեթոդի հետ կապակցված տեխնիկական հնարքների ամբողջություն է՝ ներառյալ մասնավոր գործողությունները, դրանց հաջորդականությունը և փոխկապվածությունը:*

## 2. Հետազոտական գործընթացի փուլերը

Հետազոտությունը պահանջում է փուլերի որոշակի հաջորդականություն: Սխեմատիկորեն դա կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

*Սխեմա 1*




An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

## 3. Սոցիոլոգիական հետազոտությունների դասակարգումը

Սոցիոլոգիական հետազոտությունները դասակարգվում են տարբեր հիմքերով:

*Ըստ հետազոտության նպատակի տարբերում են հետախուզական, նկարագրողական և վերլուծական հետազոտություններ:*

*Աղյուսակ 1*

| *Հետախուզական հետազոտության նպատակները* |
|---|
| - *Ծանոթանալ հիմնական փաստերին, մարդկանց և հիմնախնդիրներին:* |
| - *Զարգացնել հետազոտվող իրավիճակի հիմնավորված տեսական պատկեր:* |
| - *Հավաքել նոր գաղափարներ և զարգացնել փորձնական տեսություններ և վարկածներ:* |
| - *Հիմնավորել լրացուցիչ հետազոտության նպատակահարմարությունը:* |
| - *Ձևավորել հարցաշարը և այն կատարելագործել հետագա հարցման նպատակով:* |
| - *Զարգացնել հետագա հետազոտության տեխնիկան և ուղղությունը:* |

*Աղյուսակ 2*

| *Նկարագրողական հետազոտության նպատակները* |
|---|
| - *Ճշգրտորեն ուրվագծել հետազոտվող խումբը:* |
| - *Նկարագրել գործընթացը, մեխանիզմը կամ փոխհարաբերությունները:* |
| - *Տալ վերբալ կամ թվային/տոկոսային պատկեր:* |
| - *Բացահայտել ինֆորմացիա նոր մեկնաբանությունների զարգացման համար:* |
| - *Ներկայացնել հիմնական ինֆորմացիան կամ էլ կոնտեքստը:* |
| - *Ստեղծել կատեգորիաների ցանց կամ էլ դասակարգել դրանք ըստ տեսակների:* |
| - *Ճշտել հաջորդականությունը, փուլերի կամ քայլերի հերթականությունը:* |
| - *Հավաքել ինֆորմացիա, որը հակասում է տվյալ օբյեկտի վերաբերյալ առկա նախկին պատկերացումներին:* |

*Աղյուսակ 3*

| *Վերլուծական հետազոտության նպատակները* |
|---|
| - *Որոշել տեսության կամ սկզբունքների ճշգրտությունը:* |
| - *Պարզել թե մրցակցող ո՞ր բացատրություններն են ավելի ճշգրիտ:* |
| - *Առաջադրել գիտելիքներ բանեցված գործընթացների վերաբերյալ:* |
| - *Միավորել տարբեր թեմաները կամ հարցերը մեկ ընդհանուր դատողության մեջ:* |
| - *Կառուցել և մշակել տեսություն, որն ավելի ամբողջական կլինի:* |
| - *Ընդարձակել տեսությունը կամ սկզբունքները նոր ուղղությամբ:* |
| - *Ապահովել բացատրությունները կամ կանխատեսումները աջակցող փաստերով:* |



Հետազոտության կիրառելիության տեսանկյունից տարբերում ենք սոցիոլոգիական հետազոտության երկու տեսակ՝ հիմնական, ֆունդամենտալ և կիրառական: Այն հետազոտողները, որոնք փորձում են հասկանալ սոցիալական իրականության ֆունդամենտալ էությունը ընդգրկված են հիմնական կամ ֆունդամենտալ հետազոտություններում: Իսկ նրանք, ովքեր ցանկանում են գիտելիք ստանալ և այն կիրառել պրակտիկ հիմնախնդիրների լուծման համար կատարում են կիրառական հետազոտություններ:

### *Հիմնական և կիրառական հետազոտությունների համեմատությունը*

*Աղյուսակ 4*

| *Հիմնական, ֆունդամենտալ* | *Կիրառական* |
|---|---|
| 1. *Եզրահանգումները կատարվում են սոցիոլոգների կողմից:* | 1. *Հետազոտությունը աշխատանքի մի մասն է և այն գնահատվում է ֆինանսավորողների կողմից, ովքեր սոցիոլոգիայի դաշտում չեն:* |
| 2. *Հետազոտության պրոբլեմը և առարկան ընտրվում են ազատորեն:* | 2. *Հետազոտության պրոբլեմը նեղացվում է համապատասխանեցնելով ծառայողների կամ ֆինանսավորողների պահանջներին:* |
| 3. *Հետազոտությունը գնահատվում է գիտական բացարձակ նորմերով և հետազոտողների բարձր ստանդարտներով:* | 3. *Հետազոտությունը կարող է կատարվել արագ և ոչ ճշգրիտ և հակառակը կարող է համապատասխանել գիտական բարձր պահանջներին:* |
| 4. *Հիմնական մտահոգությունը ներքինն է:* | 4. *Հիմնական մտահոգությունն է տվյալները ընդհանրացնել ֆինանսավորողների հետաքրքրությունների շրջանակներին համապատասխան:* |
| 5. *Հիմնական նպատակն է նպաստել ֆունդամենտալ տեսական գիտելիքների հարստացմանը:* | 5. *Հիմնական նպատակն է ունենալ պրակտիկ օգուտ:* |
| 6. *Համարվում է հաջողված, երբ արդյունքները հայտնվում են գիտական ամսագրերում և ազդեցություն են ունենում գիտական այլ համայնքների վրա:* | 6. *Հաջողությունը գալիս է այն ժամանակ, երբ արդյունքները օգտագործվում են ֆինանսավորողների կողմից որոշումների կայացման ժամանակ:* |

Կիրառական հետազոտությունների ամենատարածված տեսակներից է գնահատող հետազոտությունը կամ էլ սոցիալական ծրագրերի գնահատումը: Գնահատող հետազոտությունը, օգտագործելով սոցիոլոգիական հետազոտության ընթացակարգը, հետազոտում է սոցիալական միջամտության արդյունավետությունը, որը համարեցված է որոշակի քաղաքական և կազմակերպչական կոնտեքստում և մշակվել է ուղղորդելու սոցիալական այնպիսի գործողություն, որը կբարելավի սոցիալական պայմանները: Տարբերում ենք գնահատող հետազոտության երկու հիմնական տեսակ՝ ձևի գնահատում/ Formativ evaluation և համընդհանուր գնահատում/ Summative evaluation: Առաջին տեսակը կիրառում ենք ծրագրի կառավարման նպատակով շարունակական ինֆորմացիա ստանալու, իսկ երկրորդը՝ ծրագրի վերջնական արդյունքները գնահատելու նպատակով:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

### *Գնահատող հետազոտությունների կիրառման ոլորտները*

- *Համայնքային ծառայությունների գնահատում*
- *Սոցիալական պայմանների գնահատում*
- *Տնտեսական ազդեցության գնահատում*
- *Ժողովրդագրական հետևանքների գնահատում*
- *Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում*
- *Առողջապահական արդյունքների գնահատում*
- *Հոգեբանական ինքնազգացողության գնահատում*

### *Գնահատող հետազոտությունների ժամանակ տրվող հարցերը և դրանցից բխող գնահատող հետազոտության տեսակը*

*Աղյուսակ 5*

| *Հարցերի տեսակները* | *Գնահատման տեսակը* |
|---|---|
| 1. Հարցեր ծրագրի ծառայությունների անհրաժեշտության վերաբերյալ: | 1. Կարիքների գնահատում: |
| 2. Հարցեր ծրագրի մշակման կամ հայեցակարգի վերաբերյալ: | 2. Ծրագրի տեսության գնահատում: |
| 3. Հարցեր ծրագրի գործառնության և ծառայությունների իրականացման վերաբերյալ: | 3. Ծրագրի գործընթացի գնահատում: |
| 4. Հարցեր ծրագրի արդյունքների վերաբերյալ: | 4. Ծրագրի ազդեցության գնահատում: |
| 5. Հարցեր ծրագրի ծախսերի և արդյունավետության վերաբերյալ: | 5. Ծրագրի արդյունավետության գնահատում: |

Դրանցից յուրաքանչյուրին բնորոշ են հարցերի որոշակի շարք: Մասնավորապես՝

### *1. Հարցեր ծրագրի ծառայությունների անհրաժեշտության վերաբերյալ*

- Ինչո՞ւմն է կայանում հետազոտության պրոբլեմի էությունը:
- Ի՞նչ բնութագրիչներ ունի այդ ծառայությունների կարիքն ունեցող բնակչությունը:
- Ինչպիսի՞ ծառայությունների կարիք ունի բնակչությունը:
- Ծառայությունների ինչպիսի՞ ծավալ է անհրաժեշտ և ի՞նչ ժամանակի ընթացքում:
- Ծառայությունների սպասարկման ինչպիսի՞ մեխանիզմներ են անհրաժեշտ դրանք իրականացնելու համար:

### *2. Հարցեր ծրագրի մշակման կամ հայեցակարգի վերաբերյալ*

- Ինչպիսի՞ խմբի պետք է ծառայի ծրագիրը:
- Ինչպիսի՞ ծառայություններ պետք է ներառի:
- Ծառայությունների իրականացման ո՞ր մեխանիզմն է լավագույնը:



- Ինչպե՞ս կարող է ծրագիրը բացահայտել և ընդգրկել նպատակադրված խմբին:
- Ինչպե՞ս պետք է ծրագիրը կազմակերպվի:
- Ինչպիսի՞ ռեսուրսներ են անհրաժեշտ և համապատասխան ծրագրի իրականացման համար

### *3. Հարցեր ծրագրի գործառնության և ծառայությունների իրականացման վերաբերյալ*

- Արդյո՞ք, նպատակադրված ծառայությունները մատուցվել են նպատակադրված խմբին:
- Կան, արդյո՞ք, կարիքավոր, բայց չսպասարկված մարդիկ, որոնք դուրս են մնացել ծրագրի շրջանակներից:
- Արդյո՞ք, բավարար չափով նպաստառուներ են օգտվում ծառայություններից:
- Արդյո՞ք, նպաստառուները բավարարված են ծառայություններից:
- Արդյո՞ք, վարչական, կազմակերպչական և անձնական ֆունկցիաները լավ են կատարվում:

### *4. Հարցեր ծրագրի արդյունքների վերաբերյալ*

- Արդյո՞ք, ծրագրի նպատակներն ու խնդիրներն իրականացվել են:
- Արդյո՞ք, ծառայություններն օգտակար ազդեցություն են ունեցել նպաստառուների վրա:
- Արդյո՞ք, որոշ նպաստառուներ ավելի շատ են ազդվել ծրագրից, քան մյուսները:
- Արդյո՞ք, պրոբլեմը կամ իրավիճակը, որին ուղղված է եղել սոցիալական միջամտությունը/ծրագիրը, շտկվել է:

### *5. Հարցեր ծրագրի ծախսերի և արդյունավետության վերաբերյալ*

- Արդյո՞ք, միջոցները արդյունավետ են օգտագործվել:
- Արդյո՞ք, ծառայությունների համար կատարված ծախսերը համապատասխանում են ստացված օգուտներին:
- Ինչպիսի՞ այլընտրանքային ծրագիր կարելի է իրականացնել ավելի ցածր գնով:

Ժամանակի առումով սոցիոլոգիական հետազոտությունները բաժանում են՝

*Սխեմա 2*




An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

Յուրաքանչյուր սոցիոլոգիական հետազոտություն օգտագործում է տվյալների հավաքման որոշակի տեխնիկա: Այդ տեխնիկաները կարելի է խմբավորել երկու կատեգորիաներում՝ քանակական և որակական:

*Սխեմա 3*




## 4. Սոցիոլոգիական հետազոտության ծրագրի կազմում

Ցանկացած սոցիոլոգիական հետազոտության անցկացման համար հարկավոր է նախ և առաջ մշակել և կատարելագործել հետազոտության ծրագիրը: Հետազոտության ծրագիրը բաղկացած է մեթոդաբանական և մեթոդական մասերից: Ծրագրի մեթոդաբանական մասն իր մեջ ներառում է՝

1. *Հետազոտության պրոբլեմի և պրոբլեմային իրավիճակի սահմանում և հիմնավորում:*
2. *Հետազոտության նպատակի սահմանում:*
3. *Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում:*
4. *Խնդիրների մշակում և հիպոթեզների առաջադրում:*
5. *Հիմնական հասկացությունների օպերացիոնալիզացիա:*

Ծրագրի մեթոդական մասն իր մեջ ներառում է՝

1. *Հետազոտության ռազմավարական ծրագրի մշակում:*
2. *Ինֆորմացիայի հավաքման մեթոդների նպատակահարմարության և հուսալիության հիմնավորում:*
3. *Ընտրանքային համախմբության ձևավորման մեթոդների նկարագրություն:*

## 5. Էթիկական խնդիրները սոցիոլոգիական հետազոտություններում

Սոցիոլոգիական ցանկացած հետազոտության ժամանակ հետազոտողը բախվում է էթիկական բազմաթիվ խնդիրների և պետք է որոշի, թե ինչպես գործել այդ դեպքերում: Էթիկական կոդեքսը հետազոտողին թույլ է տալիս մասամբ կողմնորոշվել, սակայն այստեղ մեծ դեր ունեն հետազոտողի անձնական հատկանիշները:



Հետազոտողների էթիկական կոդեքսի ստեղծումը հենվել է Նյուրեմբերգյան կոդեքսին, որը զարգացվել է ի պատասխան Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին համակենտրոնացման ճամբարներում իրականացվող անմարդկային փորձերին: Իհարկե, այդ կոդեքսը կենտրոնանում է բժշկական գիտափորձերի վրա, սակայն այն հիմք է ծառայել սոցիալական գիտնականների համար:

***Սոցիալական հետազոտողի հիմնական էթիկական սկզբունքները***

- *Էթիկական պատասխանատվությունը մնում է անհատ հետազոտողի վրա:*
- *Չշահագործել հետազոտության օբյեկտը սեփական շահերի համար:*
- *Խրախուսել հարցվողների հետ ֆորմալ համաձայնվածության ձեռք բերումը:*
- *Տալ բոլոր երաշխիքները մասնավորի, գաղտնիության և անանունության պահպանման վերաբերյալ:*
- *Չի կարելի ճնշել օբյեկտին:*
- *Կիրառել հետազոտության պրոբլեմին համապատասխան մեթոդ:*
- *Չեզոքացնել հետազոտության օբյեկտի վրա եղած անբարենպաստ հետևանքները:*
- *Կանխատեսել հետազոտության արձագանքները և արդյունքների հրապարակումը:*
- *Բացահայտել հետազոտության ֆինանսավորողին:*
- *Համագործակցել «պատվիրատու» ազգի հետ, երբ համեմատական հետազոտություն է անցկացվում:*
- *Հրապարակել հետազոտության անցկացման մանրամասնությունները արդյունքների հետ միասին:*
- *Կատարել տվյալներից բխող մեկնաբանություններ:*
- *Անցկացնել մեթոդաբանորեն գրագետ հետազոտություն:*
- *Չանցկացնել գաղտնի հետազոտություն:*

## 6. Որակական հետազոտությունների առանձնահատկությունները

**Որակական հետազոտությունների էությունը:** Որակական հետազոտությունը սոցիալական կյանքի մեկնաբանմանն ուղղված մի գործընթաց է՝ հիմնված առանձնահատուկ մեթոդաբանական ավանդույթների վրա: Այն հետազոտողին հնարավորություն է տալիս երևույթը հետազոտելու բնական պայմաններում և առանցքային տեղեկատուների *(informant)* կարծիքների հիման վրա, բացահայտելու ու վերլուծելու սոցիալական երևույթի բարդ, ամբողջական պատկերը:

Որակական հետազոտությունները հնարավորություն են տալիս հայեցակարգային վերլուծության ենթարկել սոցիալական իրականությունը և աշխարհի մասին առկա սուբյեկտիվ պատկերացումները:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

Որակական հետազոտողը ձգտում է սոցիալապես կառուցված իրականության էությունը, այն, թե ինչպես են մարդիկ տեսնում, ընկալում և մեկնաբանում իրենց սոցիալական աշխարհը: Որակական հետազոտությունն անց է կացվում սոցիալական կյանքի անհատական կողմերի հետազոտման նպատակով, որը ենթադրում է կոնկրետ անձանց կյանքի փորձի մեկնաբանությունը կոնկրետ իրավիճակներում:

Որակական հետազոտությունը հիմնված է տարբեր մեթոդների և մոտեցումների (մեկնաբանող, բնագիտական) վրա: Սա նշանակում է, որ որակական հետազոտողն իրերն ու երևույթները հետազոտում է բնական պայմաններում, փորձում է իմաստավորել կամ մեկնաբանել երևույթն այնպես, ինչպես որ հետազոտվողներն են այն պատկերացնում:

Որակական հետազոտությունների ժամանակ ուշադրությունը բևեռվում է սուբյեկտիվին, բնազդայինին, անհատականին, մարդկանց սոցիալական գործողություններին և այն իմաստներին, որոնք դրվում են այդ գործողությունների հիմքում: Այս հետազոտությունների նշանակետը սուբյեկտն է և նրա դրակտիկ գործունեությունը կոնկրետ սոցիալական իրավիճակում: Այդ իսկ պատճառով որակական հետազոտությունների հիմքում ընկած է իրավիճակային միկրովերլուծությունը:

Որակական մեթոդների կիրառումը հետազոտողին թույլ է տալիս տարբերակելու սոցիալական դերը իրական դերակատարումից և վերջինիս հիմքում ընկած սուբյեկտիվ իմաստավորումից:

Որակական հետազոտողները հարցազրույցների և դիտարկումների օգնությամբ հետազոտում են անձի կյանքի խնդրային պահերը և դրանց նշանակությունը բնութագրող բազմաբնույթ էմպիրիկ նյութեր, ինչպիսիք են՝ դեպքերը, կյանքի պատմությունները, պատմական, վիզուալ տեքստերը, ինքնադիտման արդյունքները:

Որակական հետազոտությունները խաչվում են տարբեր գիտաճյուղերի, հետազոտման դաշտերի և առարկաների հետ՝ իրենց մեջ ներառելով բարդ, փոխկապված հասկացություններ և հայեցակարգեր:

Որակական հետազոտություններն ունեն որոշակի բնութագրիչներ: Ըստ ամերիկացի սոցիոլոգ Լորենս Նոմանի՝ որակական հետազոտության հիմնական բնութագրիչներն են՝

1. ***Հետազոտության ճկուն ընթացակարգը:*** Ի տարբերություն քանակական հետազոտությունների՝ որակական հետազոտությունների ընթացակարգը ճկուն է և պարբերական բնույթ ունի: Դա նշանակում է, որ հետազոտության գործողությունների հաջորդականությունը խստորեն ամրագրված չէ, ինչը հետազոտողին հնարավորություն է տալիս դրանք համապատասխանեցնելու իրավիճակի պահանջներին:
2. ***Սոցիալական կոնտեքստի կարևորությունը:*** Սոցիալական իրականությունը, երևույթները, դեպքերը հասկանալու համար որակական հետազոտողները կարևորում են սոցիալական կոնտեքստի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Սոցիալական կոնտեքստը հնարավորություն է տալիս լրացնելու և ճշգրտելու հարցազրույցի արդյունքները:
3. ***Դեպքի հետազոտման արժեքը:*** Ի տարբերություն քանակական հետազոտությունների, որտեղ հետազոտվում են բազմաթիվ դեպքեր, որակական հետազոտությունները հիմնվում են մեկ կամ մի քանի դեպքերի հետազոտման վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս մեկ կամ մի քանի դեպքերի ուսումնասիրության արդյունքում ստանալ խորը և բազմակողմանի տեղեկատվություն:
4. ***Հետազոտողի ներգրավվածությունը:*** Ի տարբերություն քանակական հետազոտությունների՝ որակական հետազոտություններում հետազոտողի ընդգրկվածությունն ավելի մեծ է: Այդ պատճառով էլ քանակական հետազոտողները կամ դրոզիտիվիստական մոտեցման կողմնակիցները կասկածանքով են վերաբերվում որակական հետազոտողների օբյեկտիվությանը, քանի որ վերջիններս ավելի մեծ հնարավորություն ունեն ազդելու հետազոտության ընթացքի և արդյունքների վրա: Որակական հետազոտություններում հետազոտողը հանդես է գալիս որպես հետազոտության «գործիք», ինչը ենթադրում է նրա ակտիվ մասնակցությունը հետազոտության ողջ ընթացքում:
5. ***Հիմնավորված տեսությունը (Grounded theory):*** Այս տեսության հիմնադիրներն են ամերիկացի սոցիոլոգներ Բարնեյ Գլասերը և Անսելմ Ստրոսը: Այս տեսությունը մշակվում և զարգացվում է տվյալների հավաքմանը զուգահեռ: Քանակական հետազոտողները հետազոտությունը սկսում են տեսության ուսումնասիրությունից, հիպոթեզների ձևակերպումից, սանդղակների և փոփոխականների ստեղծումից (տե՛ս աղյուսակ 6): Մինչդեռ որակական հետազոտողը տեսությունը կառուցում է դաշտային տվյալների համեմատության, ընդհանրացման և վերլուծության հիման վրա: Այս մոտեցումը հետազոտողին հնարավորություն է տալիս հետազոտությունն ավելի ճկուն դարձնել և թույլ տալ, որպեսզի տվյալները և տեսությունը փոխազդեն միմյանց հետ:

*Աղյուսակ 6*

***Քանակական և որակական հետազոտությունների համեմատական վերլուծություն***

| Քանակական հետազոտություն | Որակական հետազոտություն |
|---|---|
| - Ստուգել հիպոթեզները և տեսությունը:<br>- Հասկացություններն առանձին փոփոխականների տեսք ունեն:<br>- Չափման սանդղակները ձևայնացված են և կառուցվում են համակարգված ձևով՝ նախքան տվյալների հավաքումը:<br>- Տվյալները ճշգրիտ չափումների արդյունքում ստացված թվեր են:<br>- Տեսությունը պատճառական է և դեդուկտիվ: Անցում ընդհանուրից մասնավորի:<br>- Ընթացակարգը ձևայնացված է, հետազոտության գործողությունների հաջորդականությունը ամրագրված է:<br>- Տվյալները վերլուծվում են վիճակագրության օգնությամբ և համեմատվում առաջադրված հիպոթեզների հետ:<br>- Տվյալների հիման վրա երևույթի կամ խնդրի իմաստային մեկնաբանություն: | - Հասկացությունները թեմաների, շարժառիթների, ընդհանրացումների տեսք ունեն:<br>- Չափման սանդղակները ձևայնացված չեն և ստեղծվում են հանդատարասի, իրավիճակին համապատասխան:<br>- Տվյալները բառերի, դիտարկումների և դատողությունների տեսք ունեն:<br>- Տեսությունը կարող է լինել պատճառական և ոչ պատճառական, բայց հիմնականում ինդուկտիվ: Անցում մասնավորից ընդհանուրի:<br>- Հետազոտության ընթացակարգը ճկուն է և մասնավոր է:<br>- Վերլուծությունը ինդուկտիվ է և ենթադրում է տեքստային վերլուծություն, թեմատիկ ընդհանրացումներ: Վերլուծության արդյունքում առաջադրվում կամ ճշգրտվում են հիպոթեզներ, առաջ են քաշվում տեսական եզրահանգումներ, ըստ որոնց կառուցվում է տեսություն: |

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

6. *Տրիանգուլյացիայի մեթոդը:* Որակական հետազոտությունների արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը ստուգելու և բարձրացնելու համար հետազոտողները դիմում են տրիանգուլյացիայի մեթոդին, որն իրենից ներկայացնում է տվյալների համադրման, վերլուծության տարբեր մեթոդների և աղբյուրների համադրում:
7. *Հետազոտության գործընթացը և դեպքերի հաջորդականությունը:* Ժամանակը որակական հետազոտության անբաժանելի մասն է, և որակական հետազոտողը կարևորում է դեպքերի ժամանակագրային հաջորդականությունը:
8. *Հետազոտության մեկնաբանումը:* Որակական տվյալների մեկնաբանությունը տարբերվում է քանակական տվյալների մեկնաբանությունից: Որակական հետազոտությունների հաշվետվությունները հազվադեպ են ընդգրկում աղյուսակներ, մեծերի թվային արտահայտություններ, դրանց փոխարեն դրանք պարունակում են նկարներ, մեծերի կառուցվածքը ցուցադրող սխեմաներ և այլն: Այստեղ հետազոտողը տվյալները մեկնաբանում է՝ դրանց տալով որոշակի նշանակություն և լսարանին դարձնում հասկանալի:

***Որակական մեթոդների կիրառության եղանակը:*** Որակական մեթոդները կարելի է կիրառել ինչպես առանձին՝ որպես հետազոտության հիմնական մեթոդ, այնպես էլ դրանք կարելի է զուգակցել քանակական մեթոդների հետ: Այդ մեթոդների զուգակցումը հետազոտողին հնարավորություն է տալիս ուսումնասիրելու երևույթի տարբեր առումները, ինչպես նաև ստուգելու ստացված ինֆորմացիայի հավաստիությունը և հուսալիությունը: Ստորև բերված սխեման ցույց է տալիս որակական հետազոտությունների կիրառության եղանակները:

*Սխեմա 4*

Զուտ որակական հետազոտություն

Որակական – Քանակական

Քանակական – Որակական

Որակական և քանակական միաժամանակ

Երբ որակական հետազոտությունն անց է կացվում հետազոտական նախագծի առաջին փուլում, ապա այստեղ հետազոտողները նպատակ են հետապնդում ավելի շատ ինֆորմացիա բացահայտել հետազոտվող խնդրի, օբյեկտի վերաբերյալ և դրա հիման վրա մշակել հետագա հետազոտության մանրամասն ծրագիր և գործիքը: Որոշ դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում լրացնել քանակական հետազոտության տվյալները դաշտերազարդ և «խոսուն» որակական տվյալներով, կամ էլ ստուգել ինֆորմացիայի հավաստիությունը այլ մեթոդների կիրառությամբ, որակական հետազոտությունն անց է կացվում քանակականից հետո:



Որակական և քանակական հետազոտությունները կարելի է անցկացնել նաև միաժամանակ: Այս դեպքում հետազոտվում են միևնույն խնդրի տարբեր առումները, կամ էլ երևույթի վերլուծությունն արվում է տարբեր մակարդակներում:

***Որակական հետազոտությունների կիրառման նախընտրությունը:*** Որակական հետազոտությունների ընտրությունը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով: Սուբյեկտիվ պատճառներն ավելի շատ կապված են հետազոտողի անհատական հատկանիշների և մասնագիտական նախընտրությունների հետ: ***Այդ տեսանկյունից պետք է ասել, որ որակական հետազոտություններ անց են կացնում այն հետազոտողները, ովքեր***

- պատրաստ են դաշտում երկար ժամանակ անցկացնելու և բացահայտելու հետազոտվող անձի, խմբի տեսակետները, նրանց շարժառիթները, սոցիալական պատմությունները և այլն:
- կարող են ընդգրկվել տվյալների վերլուծության բարդ, ժամանակատար գործընթացում՝ դրանք տեսակավորելով, կրճատելով համապատասխան կատեգորիաներում:
- կարող են գրել երկար, ազատ և գեղարվեստական ոճով շարադրված հաշվետվություններ՝ ցուցադրելով հետազոտվողների տեսակետների և նրանց սոցիալական փորձի բազմազանությունը:
- կարող են հետազոտել առանց հստակորեն ամրագրված ընթացակարգի և հարցաշարի, քանի որ այստեղ հետազոտության ընթացակարգը ձևայնացված չէ, այլ ընդհակառակը՝ պարբերական և ստեղծագործական բնույթ ունի:
- պատրաստ են լսելու, ըմբռնելու և հարգելու հետազոտվողների տեսակետը, ակտիվորեն փոխազդելու նրանց հետ, մասնակցելու նրանց սոցիալական կյանքին՝ առանց վտանգի ենթարկելով նրանց:
- որակական հետազոտությունը ընդգծում է հետազոտողի ակտիվ լսողի և սովորողի դերը: Դա նշանակում է, որ հետազոտողը պատմությունները պատմում է հետազոտվողների տեսանկյունից, այլ ոչ թե հանդես է գալիս որպես «փորձագետ»՝ գնահատելով և դատելով հարցվողների կարծիքները:

*Ելնելով օբյեկտիվ պատճառներից՝ որակական հետազոտությունն ընտրվում է, քանի որ՝*

- հետազոտվող խնդիրը պահանջում է այդպիսի մոտեցում: Որակական հետազոտություններն անց են կացվում ոչ թե խմբերի միջև օրինաչափությունների բացահայտման, այլ առավելապես դրանց սոցիալական փորձի ու վարքային մոդելի կառուցման և ըմբռնման նպատակով:
- անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել խնդրի էությունը՝ դրա վերաբերյալ ավելի խորը տեղեկատվություն ստանալու նպատակով:
- հետազոտությունը հարկավոր է անցկացնել բնական պայմաններում: Սա հնարավորություն է տալիս իրադարձությունները հետազոտել տեղերում, կոնտեքստից չկտրված:
- կա բավարար ժամանակ և անհրաժեշտ միջոցներ: Եթե հետազոտության ժամանակը և միջոցները սուղ են, ապա որակական հետազոտության իրա-

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

գործումը գրեթե անհնար է, որովհետև հետազոտության այս տեսակը ժամանակի և մարդկային ռեսուրսների առումով ամենաթանկն է:

- լսարանը ավելի շատ հարգում է հետազոտության այդ տեսակը և հակված չէ հաշվետվության մեջ տեսնելու վիճակագրական տվյալներ, որոնք «անվիճելի են» և «ճշգրիտ», այլ ընդհակառակը՝ կնախընտրի լսել հետազոտվող մարդկանց կենդանի ձայնը և մտովի տեղափոխվել նրանց աշխարհը:

***Որակական հետազոտությունների ընտրանքը:*** Ի տարբերություն քանակական հետազոտողների, որոնք աշխատում են վիճակագրական տեսանկյունից նշանակալի համախմբությունների հետ, որակական հետազոտությունները ընդգրկում են սոցիալական որոշակի կոնտեքստում գտնվող փոքր համախմբություններ՝ դրանք խորությամբ հետազոտելու նպատակով: Այդ իսկ պատճառով որակական հետազոտությունների ընտրանքը նպատակաուղղված է, այլ ոչ թե պատահական:

Որակական հետազոտությունների ժամանակ իրականացվում է տեսական ընտրանք, որը ենթադրում է հետազոտվող անձանց կամ խմբերի ընտրությունը համաձայն տեսական չափանիշների կամ տեսական նպատակների:

Համաձայն որակական հետազոտություններում կիրառվող նպատակաուղղված ընտրանքի, հետազոտության ընթացքում ընտրվում են ***տեղեկատվությամբ հարուստ դեպքեր*** ավելի խորը հետազոտման համար:

Որակական հետազոտությունները պահանջում են դաշտային աշխատանքների ժամանակ ընտրանքի անընդհատ և պարբերական վերանայում: Այնուհանդերձ, որակական հետազոտություն սկսելիս հետազոտողը պետք է ունենա ընտրանքի նախնական սխեմա, որը կարող է ձևափոխվել հետազոտության ընթացքում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է սոցիոլոգներ Մասյու Մայլսի և Մայքլ Հաբերմանի կողմից նկարագրված որակական հետազոտությունների ընտրանքների տեսակները՝ Մայքլ Փաթոնի լրացումներով, և այն թե ինչ նպատակ է հետապնդում այդ ընտրանքներից յուրաքանչյուրը.

*Աղյուսակ 7*

***Ընտրանքի ռազմավարության տեսակները որակական հետազոտությունում***

| Ընտրանքի տեսակը | Նպատակը |
|---|---|
| Առավելագույն փոփոխությունների ընտրանք | Փաստել զանազան փոփոխությունները և բացահայտել կարևոր ընդհանուր նմուշները: |
| Համասեռ ընտրանք | Այստեղ, ի տարբերություն նախորդի, ընտրվում են համասեռ խմբեր: Այս ընտրանքի նպատակն է նկարագրել որևէ ենթախումբ առավել խորությամբ: Ֆոկուս խմբերը կառուցվում են համաձայն այս ընտրանքի: |
| Քննադատական դեպքի ընտրանք | Այստեղ հետազոտությունը փորձում է վերհանել, թե ինչ է տեղի ունենում այդ դեպքի հետ: «Եթե ինչ որ մի բան կատարվում է այստեղ, ուրեմն դա կատարվում է ամենուր»,- սա է այս ընտրանքի գաղափարախոսությունը: Այդ պատճառով մեկ քննադատական դեպքի տրամաբանական ընդհանրացումները հնարավոր են դարձնում ինֆորմացիայի կիրառումը այլ դեպքերի համար: |
| Տեսության վրա հիմնված ընտրանք | Հետազոտողը ընտրում է դեպքեր, իրադարձություններ, կյանքի դրվագներ՝ հիմնվելով այն բանի վրա, որ դրանք կարող են կարևոր լինել տեսության կառուցման համար: |
| Հաստատող և ժխտող դեպքերի ընտրանք | Հետազոտողը կատարում է նախնական վերլուծություն՝ կենտրոնանալով բացառությունների և փոփոխությունների վրա: Հաստատող դեպքերը դրանք այն դեպքերն են, որոնք համապատասխանում են արդեն իսկ բացահայտված նմուշներին, իսկ ժխտող դեպքերը հերքում են բացահայտված նմուշները և հետազոտությունը տանում առաջ: |
| Ձնակույտի կամ շղթայի միջոցով ձևավորված ընտրանք | Այս ընտրանքի միջոցով բացահայտվում են տեղեկատվությամբ հարուստ մարդիկ կամ էլ դեպքերը: Այս ընտրանքի նպատակն է բացահայտել հետաքրքիր դեպքեր այն մարդկանցից, ովքեր ճանաչում են տեղեկատվությամբ հարուստ դեպքեր իմացող այլ մարդկանց և նրանք էլ իրենց հերթին ուրիշներին: |
| Ծայրահեղ կամ շեղվող դեպքի ընտրանք | Սրանք տեղեկատվությամբ հարուստ այն դեպքերն են, որոնք արտասովոր են կամ հատուկ: Հետազոտության օբյեկտից տեղեկանում ենք չափազանց անսովոր դրսևորումների մասին: |
| Տիպական դեպքի ընտրանք | Այս ընտրանքի նպատակն է բացահայտել, թե ինչն է նորմալ կամ միջին: |
| Ինտենսիվ ընտրանք | Այս ընտրանքի նպատակն է բացահայտել հարուստ տեղեկատվությամբ դեպքեր, որոնք ինտենսիվորեն են դրսևորում հետաքրքրող երևույթը՝ առանց ծայրահեղությունների: |
| Քաղաքականապես կարևոր դեպքի ընտրանք | Այս ընտրանքի նպատակն է ընտրել քաղաքականապես զգայուն դեպքեր կամ վերլուծության միավորներ: Սա ընտրանքի ձևավորման լրացուցիչ ռազմավարություն է և դեպքերի սակավաթվության պայմաններում ավելացնում է ինֆորմացիայի օգտակարությունը: |
| Նպատակաուղղված պատահական ընտրանք | Եթե ընտրանքը փոքր է, դա չի նշանակում, որ այն պատահական չի կարող լինել: Այնուամենայնիվ այս ընտրանքը ներկայացուցչական չէ, բայց հուսալի է: |
| Շերտավորված նպատակաուղղված ընտրանք | Ընտրանքը կառուցել ըստ շերտերի, որտեղ շերտերը հիմնականում համասեռ են: Սա օգնում է նկարագրել ենթախմբերը, հեշտացնել համեմատությունները: |
| Չափանիշների վրա հիմնված ընտրանք | Այստեղ, հետազոտության նպատակից ելնելով, առանձնացվում են որոշակի չափանիշներ, որոնց հիման վրա էլ կատարվում է ընտրանք: |
| Պատեհ առիթի ընտրանք | Հետազոտողը կարող է արագ որոշում կայացնել ընտրանքի ռազմավարության վերաբերյալ՝ օգտվելով տվյալների հավաքման նոր հնարավորությունից և ստեղծված իրավիճակից: |
| Կոմբինացված կամ խառը ընտրանք | Ընտրանքի ձևավորում տարբեր մեթոդների միաժամանակյա կիրառությամբ (տրիանգուլյացիա), ինչը նպաստում է բազմազան կարիքների և հետաքրքրությունների համապատասխանեցմանը: |
| Հարմարավետ ընտրանք | Ընտրանքի այս տեսակը կիրառվում է ժամանակի և միջոցների սղության դեպքում: Սա ընտրանքի ձևավորման պակաս ցանկալի ռազմավարություն է, քանի որ ժամանակի, նյութական միջոցների և ջանքերի խնայումը տեղի է ունենում ինֆորմացիայի և դրա հավաստիության գնով: |



An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

Ընտրանքն իր մեջ ընդգրկում է ոչ միայն մարդկանց, դեպքեր, այլ նաև հետազոտման վայրը, իրադարձությունները և սոցիալական գործընթացները: Այդ իսկ պատճառով ընտրանք ձևավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերոհիշյալ տարրերի ընտրության չափանիշները: ***Բազմաքիվ*** վայրերի, դեպքերի կամ հետազոտման ասպեկտների ընտրությունը հեշտացնում է դրանց միջև համեմատությունը և հնարավոր դարձնում սոցիալական գործողության սահմանումների նմանությունների ու տարբերությունների մեկնաբանումը:

Ի տարբերություն քանակական հետազոտությունների, որտեղ ընտրանքի ծավալը հաշվարկվում է մաթեմատիկական որոշակի բանաձևերով և որոշակի սխալի հավանականությամբ, որակական ընտրանքի ծավալի վերաբերյալ *ստանդարտներ կամ կանոններ գոյություն չունեն:* Ընտրանքի ծավալը պայմանավորվում է հետազոտության նպատակով, միջոցներով և նրանով, թե ինչը օգտակար և հուսալի կլիներ հետազոտության համար:

Որակական հետազոտության հուսալիությունը, նշանակալիությունը մեծապես պայմանավորված է տեղեկատվությամբ հարուստ դեպքերի ընտրությունից և հետազոտողի դիտելու/վերլուծելու կարողություններից, քան թե ընտրանքի ծավալից:

Այսպիսով, որակական հետազոտությունների իրականացման ժամանակ հետազոտողի առջև ծառանում են երկու կարևոր ընտրանքային խնդիր՝ վայրի ընտրությունը, որտեղ անց է կացվելու դաշտային աշխատանքը և դաշտի սահմաններում ընտրանքի կատարումը:

## 7. Որակական տվյալների վերլուծության բաղկացուցիչները. փոխազդող մոդել

*Սխեմա 5*






*Որակական տվյալների ավանդական վերլուծության հաջորդականության համեմատությունը նախապես ձևայնացված դեպքի վերլուծության հետ*

*Սխեմա 6*

***Ավանդական վերլուծություն***




*Սխեմա 7*

***Նախապես ձևայնացված դեպքի վերլուծություն***




An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

## Օգտագործված գրականության ցանկ


1. Analyzing qualitative data. Edited by Alan Bryman, Robert Burgess, Lonon and New York, 1994
2. Denzin Norman K., Yvona. S. Lincoln, Handbook of Qualitative research. SAGE publication, 1994
3. Glaser Barney G. /Strauss Anselm L. The Discovery of grounded theory: strategies for qualitative researach. Aldine de Gruyter/New York, 1967
4. Miles Matthew B., Huberman Michael A. Qualitative Data Analysis: An expanded sourcebook. SAGE publications, 1994
5. Neuman Lawrence W. Social Research methods. Quantitative and qualitative approaches. University of Wisconsin at Whitewater, 1997
6. Rossi Peter H., Freeman Howard E., Mark. W. Lipsey. Evaluation: A systematic Approach. SAGE publication, 1999
7. Shadish William R., Jr. Cook Thomas D., Levitan Laura C. Foundations of Program Evaluation. Theories of Practice. SAGE publication,1995
8. Ядов В. А. Стратегия социологического исследования. М. 1998г.


# ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

## Սոցիոլոգիայում դիտարկման մեթոդի կիրառման պատմությունը

Իրենց շրջապատող իրականության ճանաչման նպատակով մարդիկ միշտ էլ հայացքը հառել են իրենց շրջապատող առարկաներին ու տեղի ունեցող երևույթներին, հետևել կատարվող փոփոխություններին, այսինքն՝ օգտվել են դիտարկումից: Դիտարկումը իրականության ճանաչման ամենակարևոր մեթոդներից է, որը բնագիտության մեջ օգտագործվում է շատ վաղուց: Բնագիտության արագ զարգացումը և ստացվող տեղեկությունների հավաստիության բարձր աստիճանը18-րդ դարի վերջին առաջացնում էր հասարակագետների նախանձը:

19-րդ դարի սկզբին ֆրանսիացի սոցիոլոգ Օ.Կոնտը շրջանառության մեջ դրեց «սոցիոլոգիա «հասկացությունը և հաստատեց այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեին սոցիոլոգները սոցիալական իրականության ուսումնասիրման ժամանակ: Դրանց մեջ էր նաև դիտարկման մեթոդը:

Ֆրանսիացի մեկ ուրիշ գիտնական՝ Ֆ. Լե-Պլեն, մի փոքր ավելի ուշ այդ մեթոդն օգտագործեց ընտանիքների ուսումնասիրության ժամանակ: Նա ընտրեց ընտանիքը որպես ամեն մի հասարակության պարզագույն մոդել, որպես նրա բջիջ: Աշխատելով որպես լեռնային ինժեներ՝ նա լինում էր տարբեր երկրներում, ապրում տարբեր ընտանիքներում: Ընդհանուր առմամբ նա դիտարկեց 300 ընտանիք: Արդյունքում նա գրեց «Եվրոպական բանվորները» գիրքը: Այնուհետև այդ մեթոդի կիրառմամբ բազմաթիվ հետազոտություններ կատարվեցին ԱՄՆ–ում և դրանց հիման վրա գրվեցին Հ. Ռայթի «Փողոցի անկյունի հասարակությունը» Անդերսոնի «Շրջմոլիկը» և այլ աշխատություններ:

## Սոցիոլոգիական դիտարկման առանձնահատկությունները

Սոցիոլոգիայում դիտարկումը սահմանվում է որպես հետազոտողի կողմից տեղի ունեցող իրադարձությունների, պայմանների ուղղակի ու անմիջական արձանագրում: Դիտարկումը հնարավորություն է տալիս վարքն արձանագրել այնպես, ինչպես այն դրսևորվում է: Սա անփոխարինելի է դառնում այս մեթոդը բոլոր այն դեպքերում, երբ մարդիկ տարբեր պատճառներով չեն կարող պատմել իրենց վարքի մասին՝ երեխաները, պատմելու կարողությունից զրկված մարդիկ, շեղվող վարք ունեցողները և այլն: Դիտարկումն առաջնային տեղեկությունների ստացման մեթոդ է և սոցիոլոգիա է ներթափանցել ազգագրությունից:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

Սոցիոլոգիայում դիտարկման կիրառումն ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցից առաջինը դիտարկողի կապն է դիտարկվող օբյեկտի հետ: Սոցիոլոգիական ճանաչողության գործընթացում սուբյեկտ - օբյեկտ բաժանումը խիստ պայմանական է, որովհետև մարդը կարող է միաժամանակ լինել և սուբյեկտ, և օբյեկտ: Օրինակ, նա կարող է ինքնադիտարկման միջոցով ճանաչել իրեն: Ոչ միշտ է հնարավոր ճանաչողության օբյեկտի սահմանները այնպես հստակ գծել, որ դրանք բացառեն սուբյեկտի ներկայությունը նրանում: Բացի այդ սուբյեկտի անհատական կենսափորձը, արժեքային կողմնորոշումները ու դիրքորոշումները իրենց կնիքն են դնում սոցիալական իրականության ընկալման վրա:

Սոցիալական հետազոտության օբյեկտիվությունը կայանում է ոչ թե նրանում, որ դրանից դուրս գցվի սուբյեկտիվ տարրը, այլ որպեսզի ուսումնասիրվող օբյեկտի արժեքային չափանիշները չփոխարինվեն հետազոտողի չափանիշներով:

Ընդհանրապես սիստեմատիկությունը, պլանավորվածությունը և նպատակադրվածությունը կիրառական սոցիոլոգիայում դիտարկման բնութագրիչ գծերն են:

Դիտարկման երկրորդ առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ փաստերն անցնում են դիտողի զգայությունների միջով: Զգայական ընկալումը խիստ մարդկային գիծ է և նրանից հնարավոր չէ ազատվել: Այդ պատճառով դիտարկման արդյունքների ընկալումը և մեկնաբանությունը միշտ էմոցիոնալ քող են կրում : Այդ զգայական գունավորվածությունն այնքանով է խիտ, որքանով ավելի սերտ է դիտողի և օբյեկտի կապը:

Երրորդը դիտարկման կրկնելիության/ երկրորդ անգամ / դժվարությունն է: Միայն տքնաջան և բազմակի դիտարկումն է թույլ տալիս օբյեկտի մասին ինֆորմացիան համարել հավաստի և անցնել տվյալների մեկնաբանմանը:

Դիտարկման դժվարությունները կապված են նրա առանձնահատկությունների հետ, պայմանավորված են դրանցով և բաժանվում են սուբյեկտիվի /կախված դիտարկողի անձից/ և օբյեկտիվի /անկախ/ :

Սուբյեկտիվ դժվարությունները հետազոտողի կողմից ուրիշ մարդկանց վարքի և գործողությունների ըմբռնման և մեկնաբանության անցնումն է սեփական ես-ի պրիզմայի, սեփական արժեքային կողմնորոշումների համակարգի միջով:

Օբյեկտիվ դժվարությունները դիտարկման ժամանակի սահմանափակությունն է: Ոչ բոլոր սոցիալական երևույթներն են ենթարկվում դիտարկման:

## Դիտարկում և եզրակացություններ

Ինչ որ դիտում է հետազոտողը, նա համեմատում, համադրում է այն ամենի հետ, ինչ արդեն գիտի: Դիտարկումը և եզրակացությունը տրամաբանորեն անբաժանելի են: Հետազոտողի նախորդ փորձը որոշում է նրա տեսակետը, երևույթների դասակարգման նրա համակարգը և այլն: Դիտարկելով նույն երևույթը՝ տարբեր դիտարկողներ տարբեր փաստեր կարող են արձանագրել: Դա պայմանավորված է նրանով, թե երևույթի որ կողմն են նրանք ավելի ընդգծված տեսնում: Հատկապես ազատ դի-

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



տարկման դեպքում մեծ է անհատականացման հավանականությունը: Դիտարկողն առաջին հերթին նկատում է այն, ինչ նախկինում արդեն մի քանի անգամ տեսել է:

Դիտարկողի և դիտարկվողի փոխներգործության ազդեցությունը:

Բնական գիտություններում դիտողի առկայությունը չի ազդում արդյունքների վրա: Այնինչ սոցիալական գիտություններում այդ ներկայությունը ենթադրում է դիտարկման արդյունքների խեղաթյուրում: Հենց միայն հետազոտողի ներկայությունը կարող է փոխել դիտման պայմանները, հատկապես երբ ուսումնասիրվում է փոքր խմբերի վարքը: Մեյոյի հայտնի գիտափորձերի ընթացքում այդ երևույթը սկզբում շփոթություն էր առաջացրել հետազոտողների մոտ: Երբ բացահայտ դիտարկում է կատարվում, ապա խմբի անդամների մոտ կարող է առաջանալ շփոթվածություն, լարվածություն:

Դիտարկողի անհատական հատկանիշները նույնպես կարող են ազդել դիտարկման ընթացքի վրա:

## Դիտարկման կիրառումը սոցիոլոգիական հետազոտությունների ժամանակ

Դիտարկումը հազվադեպ է դառնում սոցիալական ինֆորմացիայի հավաքման հիմնական մեթոդ: Սովորաբար այն կիրառվում է մյուս մեթոդների հետ: Դիտարկումը կարող է կիրառվել այն ժամանակ, երբ անհրաժեշտ ինֆորմացիան ուրիշ ոչ մի կերպ հնարավոր չէ ստանալ: Այդպես լինում է, երբ մարդիկ չեն կարողանում կամ չեն ցանկանում ճիշտ և մանրամասն նկարագրել իրենց գործողությունների հաջորդականությունը: Օրինակ՝ սովորական իրավիճակներում մարդու գործողությունները մեծ մասամբ ավտոմատիկ բնույթ են կրում, որոնց պատճառը, հերթականությունը կամ լարված իրավիճակները, որոնք անսովոր են մարդու համար երբեմն դժվար է ներկայացնել: Լա Պիեռը գիտափորձի օգնությամբ ապացուցել է, որ մարդկանց վարքի մասին նրանցից ստացված վերբալ ինֆորմացիան հաճախ չի համապատասխանում նրանց ռեալ վարքին: Նա չինացի մի երիտասարդ զույգի հետ երկու տարի շարունակ ճանապարհորդում էր ամերիկյան տարբեր քաղաքներով և ամեն անգամ որևէ բնակավայրում հանգրվանելիս ուշադրությամբ հետևում էր հյուրանոցատերերի վերաբերմունքին դեպի այդ զույգը: Հաճախած 251 հաստատություններից միայն մեկում նրանց հրաժարվեցին տեղ տալ: Մնացած բոլորի տերերը շատ սիրալիր էին և պատրաստակամ: Վեց ամիս հետո Լա Պիեռը հարցաթերթ է ուղարկում բոլոր իջևանատերերին: Նրանցից կեսին նա ուղղակի հարցնում է. «Դուք կընդունեք չինական ռասայի անդամներին որպես հյուր Ձեր հաստատությունում»: Մյուս կեսին տալիս է լրացուցիչ հարցեր նաև մյուս էթնիկ խմբերի մասին: Միայն մեկ «այո» պատասխան է ստացվում մի կնոջից, որը դեռ հիշում էր այն հրաշալի չինացի զույգին:

Որպես ինքնուրույն մեթոդ, դիտարկումը օգտագործվում է մենագրական հետա-

զոտությունների ժամանակ, երբ չի դիտարկվում ներկայացուցչականության ամբողջ համախմբության նկատմամբ: «Մարդը և նրա աշխատանքը», «Բանվոր դասակարգը և տեխնիկական առաջընթացը», «Փողոցի անկյունի հասարակությունը» «Հրշեջները» այդպիսի աշխատանքներ են:

Դիտարկման մեթոդը մեծ նշանակություն է ձեռք բերում աշխատանքային հիպոթեզների ձևակերպման ժամանակ: Մասնագիտական ճանաչողով դիտարկում հնարավոր չի լինում, եթե լինում էլ է, ապա միայն այլ եղանակներով ստացված ինֆորմացիան ստուգելու համար: Այնուհանդերձ, կոնկրետ սոցիոլոգիական հետազոտության մեջ դիտարկումը կարող է տարբեր նպատակների ծառայել՝ որպես ինֆորմացիայի առաջնային հիպոթեզներ առաջադրելու համար, որպես մեթոդներով ստացված տվյալների ստուգման միջոց, լրացուցիչ տեղեկություններ ստանալու միջոց:

## Դիտարկման պլանավորում

Որևէ ուսումնասիրվող օբյեկտի մասին սեփական լրիվ ինֆորմացիա, կատարյալ պատկեր ունենալու համար անհրաժեշտ է նախորոք պլանավորել դիտարկումը, կազմել պլան և ծրագիր: Պլանավորման ժամանակ պետք է խորհել որոշ ծավալների, ինֆորմացիայի հավաքման միջոցների, նախատեսել հնարավոր բոլոր խոչընդոտները, արգելքները: Առանձնացնում են դիտարկման անցկացման հետևյալ փուլերը.

1. Դիտարկման օբյեկտի և առարկայի հաստատում, նպատակի որոշում, խնդիրների ձևակերպում:
2. Միջավայրի նկատմամբ մուտք գործելու հնարավորության ապահովում, համապատասխան թույլտվությունների ստացում, մարդկանց հետ կապերի հաստատում:
3. Տեխնիկական փաստաթղթերի և սարքավորումների նախապատրաստում:
4. Դիտարկման կազմակերպում, տվյալների հավաքում, ինֆորմացիայի կուտակում:
5. Դիտարկման արդյունքների գրանցում, որը կատարվում է մի քանի ձևով՝

ա/ կարճառոտակիչ գրանցում, որն անվանվում թույլ է տալիս ժամանակը և տեղը: Դիտարկողը հարմար դադար ընտրելով առանձնացնում է տպավորությունները: Այստեղ կարևոր դեր են խաղում հիշելու և սղագրելու նրա ընդունակությունները

բ/ քարտեր, որոնց վրա գրանցվում է ինֆորմացիան

գ/ դիտարկման օրագիր, որի մեջ սիստեմատիկաբար գրանցվում են անհրաժեշտ տվյալները, անձնական դատողությունները, դժվարությունները

դ/ ֆոտո, կինո գրանցում, ձայնագրում

6. Դիտարկման վերահսկողություն, որը կարող է իրականացվել տարբեր եղանակներով.

ա/ իրադրության մասնակիցների հետ զրույցի միջոցով

բ/ այլ իրադրության հետ կապված փաստաթղթերին դիմելով և նրանցում պարունակվող տեղեկությունները համեմատելով դիտարկման արդյունքում ստացված տեղեկությունների հետ

գ/ ուրիշ դիտարկողի կողմից ստացված տվյալներով սեփական դիտարկման արդյունքների

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



դ/ ուրիշ հետազոտողների ստացված փաստերով՝ դիտարկումները կրկնելու նպատակով

7. Դիտարկման հաշվետվություն, որը պետք է պարունակի.

ա/ կատարված դիտարկման տեղի, ժամանակի և պայմանների մասին ճանաչողական փաստաթղթեր

բ/ խմբում դիտարկողի դերի, դիտարկման եղանակի մասին ինֆորմացիա,

գ/ դիտարկվող անձերի բնութագրեր,

դ/ դիտարկվող փաստերի համառոտ նկարագրություն

ե/ դիտարկողի սեփական նշումներ և մեկնաբանությունները:

## Դիտարկումների ծրագիր

Դիտարկումը օբյեկտի ուսումնասիրման է գործունեության և անցկացման գործընթացներում: Դիտարկման ծրագիրը կազմելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ դրույթները.

1. Դիտարկման օբյեկտի ժամանակը բավականաչափ տարրերի պետք է տրամադրական լինի, համապատասխանաբար օբյեկտի բնույթին և հնարավոր լինի այդ ժամանակահատվածից վերանալ ամբողջը:
2. Այդ ժամանակը պետք է կարողանա նրան համապատասխանությամբ, որոնցով հետազոտողը նպատակ ունի գտնել ստացված ինֆորմացիայի վերլուծման ժամանակ:
3. Դիտարկման օբյեկտի տարրերը /միավորները/ պետք է միանշանակորեն մեկնաբանվեն, չպետք է թույլ տալ երկիմաստ բացատրության:

Որոշակի դիտարկման ընթացքում կազմակերպված, բաց ծավալված դրանից անհրաժեշտ է նախատեսել ընդհանուր հետևյալ հարցերը. հետազոտողը խմբերի և անհատների ընտրության, դրանց որոշում, որոնց առկայությունը պետք է կարողանա դիտարկողը, փաստեր, որոնք պետք է դիտվեն, և ստացված ինֆորմացիայի հավաստիությունը:

Դիտարկման ծրագրի կազմելը, նախ և առաջ, նախատեսում է ստացվելիք փաստերի, տվյալների դասակարգման սխեմաների կառուցում: Դրանով խառնված կարելի, թե դիտողը ինչ երևույթներ պետք է առանձնացնի, ինչը՝ ոչ: Դիտարկման ընթացքում կատարվում է ինֆորմացիա, որի նախնական վերլուծության հնարավորություն է տալիս ճշտումներ կատարել դիտարկման գործընթացի մեջ: Այդ պատճառով դիտարկման ծրագիրը պետք է լինի բավականաչափ ճկուն և ճշգրիտ: Նույնիսկ կարող են հիպոթեզները փոփոխվել:

## Դիտարկվող օբյեկտի գործառնման իրավիճակների և պայմանների որոշումը

Հարկավոր է որոշել, թե հետազոտությունը ինչ հասկացություններով պետք է տանի՝ սոցիոլոգիական, սոցիալ- հոգեբանական, թե հոգեբանական, և ինչ մակարդակով պետք է կատարվի դիտարկումը՝ խմբի, խմբի մասի, թե խումբը կազմող առանձին անհատների:

Օգտագործվող հասկացությունների շրջանակի հստակեցումը, դրանց մեկ մակարդակից մյուսին, հասկացությունների մեկ համակարգից մյուսին անցնելու ուղիների մշակումը նպաստում է հստակ և տարբերակված ինֆորմացիայի ստացմանը: Ստացված տվյալները հասկանալի են դառնում ուրիշ հետազոտողների և հնարավորություն է ստեղծվում համադրել տարբեր հետազոտողների ստացած արդյունքները: Եթե ուսումնասիրության նպատակը ուսումնասիրվող օբյեկտի ընդհանուր նկարագիրը տալն է, ապա ավելի նպատակահարմար է այն դիտարկել որպես ամբողջ: Այդ ամբողջի գործունեության մեխանիզմները բացահայտելու համար կարելի է ուսումնասիրել խմբի անդամների վարքը:

Դիտարկման ծրագրի մշակման ժամանակ հարկավոր է որոշել, թե որտեղ և երբ պետք է դիտարկում անցկացնել: Օբյեկտի դիտարկումը տարբեր պայմաններում թույլ է տալիս տեսնել նրա տարբեր կողմերը, որոշել նրա մշտական բնութագրիչները, ավելի ամբողջական նկարագրել այն: Արտադրական կոլեկտիվի դիտարկման ժամանակ հարկավոր է հաշվի առնել արտաքին պայմանները՝ աղմուկը, մեքենաները, սարքավորումները, լուսավորվածությունը, որոնք կարող են ազդել հարաբերությունների վրա:

Խումբը կարելի է դիտարկել սովորական իրավիճակներում, երբ հարաբերությունները սովորական են, վարքը համարյա ավտոմատիկ, և պրոբլեմային իրավիճակներում, երբ ինչ որ բանով խախտված է ռիթմը: Երկրորդ դեպքում ինֆորմացիան ավելի հարուստ կլինի:

Դիտարկվող գործունեության պայմանների որոշումը պայմանավորված է հետևյալ ասպեկտների առանձնացմամբ.

1. Դիտարկման գործունեության տեսակը որոշող իրավիճակ/արտադրական թե ոչ արտադրական/:
2. Շրջապատի և էմոցիոնալ վիճակ, որոնցում ընթանում է դիտվող օբյեկտի գործունեությունը:
3. Իրավիճակի բնույթ / սովորական թե պրոբլեմային/:

## Դիտարկման առարկայի որոշումը

Կախված հետազոտության նպատակներից՝ սոցիոլոգը սովորաբար որպես դիտարկման առարկա վերցնում է օբյեկտի որևէ կողմը:

Ամեն ինչ չէ, որ ենթարկվում է դիտարկման: Օրինակ՝ չի կարելի դիտարկել խմբերի կառուցվածքը, նպատակները, նորմերը և արժեքները: Դրանց մասին կարելի է միայն դատել զանազան դիտարկվող դրսևորումներից:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



## Դիտարկվող հայտանիշի և դիտարկման միավորի ընտրությունը

Մինչ դիտարկման սկսումը պետք է ընտրել այն հայտանիշները, որոնցով կարելի է դատել հետաքրքրող իրավիճակի մասին: Դրա համար հարկավոր է գործունեության անընդհատ գործընթացը վերափոխել դիտարկմանը և գրանցմանը մատչելի վարքի և գործողությունների միավորների, ըստ որոնց էլ պետք է կատարվի դիտարկումը:

Դիտարկման ընթացքում դիտարկողը պետք է ուշադրություն դարձնի ինչպես մարդկանց արածներին ու ասածներին, այնպես էլ նրանց մարմնի և նրա տարբեր մասերի շարժումներին: Մարմնի լեզուն երբեմն ավելի կարևոր ինֆորմացիա է փոխանցում, քան հնչյունային խոսքը:

## Հասկացությունների սահմանումը և կատեգորիաների մշակումը

Որպեսզի դիտարկման արդյունքները հասկանալի լինեն մյուս հետազոտողներին, պետք է մշակվի դիտարկման լեզուն, հասկացությունների համակարգը, որոնց միջոցով պետք է նկարագրվեն դիտարկման արդյունքները: Կատեգորիաները խիստ սահմանված պետք է լինեն, չհատվեն մեկը մյուսի հետ, ընդհանրության նույն աստիճանը ունենան և արտահայտեն պրոբլեմի որևէ ասպեկտը: Կատեգորիաների մշակման ժամանակ ուշադրության կենտրոնում պետք է դնել ամենակարևոր հարցերը:

Սովորաբար սոցիոլոգին անհրաժեշտ է լինում օբյեկտը դիտարկել տարբեր մակարդակների վրա: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր մակարդակի համար մշակվեն կատեգորիաներ: Դիտարկման ընթացքում հարկ է լինում օգտվել ստանդարտ կատեգորիաներից, որովհետև նույն իրավիճակները, երևույթները հաճախ են դիտվում հետազոտողի կողմից: Ստանդարտացված կատեգորիաները գրանցվում են գրքում կամ հատուկ քարտերի վրա: Դիտարկվող խմբերի յուրաքանչյուր անդամի պետք է համապատասխանի մեկ թիվ, որը կարող է լինել քարտի համարը կամ կարող է լրացուցիչ նշանակվել:

Վարքի դրսևորումները հետազոտողը գրանցում է քարտի վրա:

Դիտարկման կատեգորիաների քանակը կախված է հետազոտության թեմայից, պրոբլեմի խորությունից և իհարկե դիտարկողի հմտությունից:

Դրանց քանակը շատ չպետք է լինի, այլապես օբյեկտը կբաժանվի շատ մանր միավորների, իսկ շատ քչի դեպքում կկորչի ինֆորմացիան:

Դիտարկման արդյունքները միայն այն ժամանակ են հանգում հետաքրքիր հիպոթեզների, օբյեկտների ճիշտ նկարագրության, եթե կատեգորիաների համակարգը թույլատրում է հավաքել հավաստի ինֆորմացիա: Երբ չափվում են այնպիսի բնու-

բացրիչներ, ինչպիսին անդամների միջև հակասության առկայությունն է, բավարարվածության զգացումը, նորմերը և արժեքները, օբյեկտիվության հարց է ծառանում: Քանի որ սոցիալական երևույթների չափման ժամանակ չկա չափման էտալոն, օգտվում են անուղղակի միջոցներից: Աղեկվատության չափանիշը ստացվում է էմպիրիկ եղանակով: Մի քանի դիտողներ դիտարկում են կատարում, և նրանց դիտարկման հիման վրա որոշում են, թե այս կամ այն երևույթը որքանով կարելի է մտցնել համապատասխան կատեգորիայի տակ: Սովորաբար կիրառվում է գնահատման երեք տեսակներից մեկը, մեծամասամբ՝ համաձայնության գործակիցը:

1. Դիտարկողների համաձայնության գործակից /նույն իրադրությունը դիտարկվում է տարբեր դիտարկողների կողմից միաժամանակ/:
2. Կայունության գործակից /միևնույն դիտարկողը դիտարկում է տարբեր ժամանակներ/:
3. Հուսալիության գործակից /տարբեր դիտարկողներ դիտարկումը կատարում են տարբեր ժամանակ/:

## Դիտարկման տեսակները

Դիտարկումները դասակարգում են ըստ արարողակարգի ձևականացման, ըստ դիտարկողի վիճակի, ըստ կազմակերպման պայմանների և ըստ անցկացման հաճախականության:

Ամենից թույլ ձևականացվածը ***չվերահսկվող դիտարկումն*** է, որի ժամանակ հետազոտողը նախօրոք չի որոշում, թե գործընթացի ինչ տարրեր պետք է դիտարկի: Այն չունի խիստ պլան: Դիտարկման ընթացքում դիտարկողն աստիճանաբար իր ուշադրությունը կենտրոնացնում է օբյեկտի այս կամ այն կողմի վրա: Կարելի է առանձնացնել մի շարք հարցեր, որոնք դիտարկողը պետք է պարզի.

1. Դիտարկվողները
2. Իրադրությունը
3. Նպատակը/ օբյեկտի/
4. Սոցիալական վարքը
5. Իրավիճակի հաճախականությունը և տևողությունը:

Չվերահսկվող դիտարկման թերությունը դիտարկողի սուբյեկտիվ վերաբերմունքն է դեպի օբյեկտը, որը կարող է հանգեցնել արդյունքների խեղաթյուրմանը:

***Վերահսկվող*** կոչվում է այն դիտարկումը, որի ժամանակ սոցիոլոգը նախապես որոշում է, թե ուսումնասիրվող գործընթացի որ տարրերը ավելի կարևոր նշանակություն ունեն և ուշադրությունը կենտրոնացնում է դրանց վրա: Հաճախ այս դիտարկման խնդիրն է ստուգել ուրիշ մեթոդներով ստացված տվյալները: Հնարավոր է, որ դիտարկման սկզբում կատեգորիաները շատ լինեն, այնուհետև ընթացքում պարզվի, որ դրանց մի մասը կեղծ է, մի մասը չի աշխատում:

Արդյունքների վերահսկումը իրականացվում է դիտարկման արարողակարգի

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



վում է դիտարկումը և արդյունքների գրանցումը: Որպես կանոն ձևայնացված դիտարկման դեպքում դիտարկողին տրվում է դիտարկման քարտ, որի վրա նշված են լինում դիտարկման կատեգորիաները: Դիտարկողը դիտարկման ընթացքում առանձնացնում և արձանագրում է դրանց բովանդակությանը համապատասխանող դեպքերը, իրադարձությունները, առարկաները և այլն, նրանց հանդիպման հաճախականությունը: Օրինակ, նման քարտի վրա կարող է արձանագրվել որևէ ներկայացման /թատերական,համերգային, կինո և այլն/ հանդիսատեսների վարքը: Քարտի վրա առանձնացվում են հանդիսատեսի վարքը բնորոշող հայտանիշները, դիտարկողը արձանագրում է դրանց հանդիպման հաճախականությունը՝ կապելով դրանք ժամանակի չափումների հետ: Ձևայնացված դիտարկումների դեպքում դիտարկողին թույլատրվում է իր մեկնաբանությունները գրանցել լուսանցքներում:

Դիտարկումների նկատմամբ վերահսկողությունը մեծացնում են նաև դիտարկողների թվի ավելացմամբ և արդյունքների համեմատմամբ:

Ըստ դիտարկողի մասնակցության՝ լինում է ընդգրկված և չընդգրկված դիտարկում:

***Չընդգրկված դիտարկում:*** Դիտարկումը կատարվում է դրսից. դիտարկողը չի մասնակցում իրադարձություններին, այլ միայն արձանագրում է տեսածը, չի միջամտում ոչնչի:

Այսպիսի դիտարկումը կիրառվում է զանգվածային երևույթների, գործընթացների ուսումնասիրման ժամանակ: Արտաքին դիտարկողը կարող է միայն արձանագրել երևույթները՝ չբացահայտելով նրանց մեխանիզմները, պատճառները: Արտաքին դիտարկումը կարող է կատարվել նաև հատուկ պատրաստություն չստացած դիտարկողի կողմից:

***Ընդգրկված դիտարկում:*** Հետազոտողը այս կամ այն կերպ ընդգրկված է դիտարկվող խմբում, կապված է դիտարկվողների հետ:

Ընդգրկվածության աստիճանը կարող է տարբեր լինել: Պասիվ դիտարկումից մինչև այնպիսի ընդգրկում, երբ խմբի անդամները կարծում են, թե դիտարկողն իրենց խմբի անդամ է: Ընդգրկված դիտարկումը հնարավորություն է տալիս հավաքել այնպիսի ինֆորմացիա, որը հնարավոր չէ ստանալ ոչ մի ուրիշ մեթոդով: Գոյություն ունի ընդգրկվածության 4 տիպ:

Լրիվ ընդգրկում՝ հետազոտվողներին հայտնի չէ դիտարկողի դեմքը, դիտարկման նպատակը: Հետազոտվողը ընդգրկվում է խումբ և մյուսներին հավասար գործում:

Այս մեթոդը սովորաբար կիրառվում է փակ խմբի նկատմամբ: Ընդգրկված դիտարկման ժամանակ հետազոտողը կարող է իր համար ընտրել չեզոք դիրք: Ավելի դժվար է այն դեպքում, երբ խումբը շատ փոքր է և կայուն: Այդ դեպքերում դիտարկողին խորհուրդ է տրվում.

ա/ ընդունվել խումբ որպես շարքային անդամ
բ/ ստվերում մնալ, անց ու դարձի նկատմամբ ուժեղ հետաքրքրություն չցուցաբերել
գ/ ավելի շատ լսել և դիտել,քիչ հարցեր տալ
դ/ ելույթները պետք է չեզոք լինեն և գնահատող բնույթ չունենան:

Որպեսզի հավաքվող ինֆորմացիան ավելի խոր լինի, անհրաժեշտ է դիտարկումը երկար շարունակել: Սակայն մյուս կողմից վտանգ կա, որ դիտարկողը կընտելանա խմբի կյանքին, ամեն ինչ նրան կթվա սովորական և ինֆորմացիան խույս կտա դիտարկողի աչքից: Մյուս կողմից էական հարցերի լուծման ժամանակ նա կարող է մասնակցել քննարկումներին և հետևաբար ազդել որոշումների վրա, այսինքն՝ որևէ մեկի կողմը պահել: Եթե դա բացահայտ արվի, կկորցնի մյուս կողմի վստահությունը, եթե մտքում անի, տվյալները օբյեկտիվ չեն լինի:

Հ.Ուայթը իր «Փողոցի անկյունի հասարակությունը» գրքի առաջաբանում գրում է. «Ես փորձում էի հավասարակշռել հետազոտման ժամանակ մոտեցման ազդեցությունը անտարբերությամբ/չեզոքությամբ/: Երբեմն լինում էին շրջաններ, երբ ես միայն նստում էի ժամանակը: Ես փորձում էի հաղթահարել երևույթները բացատրելու իմ ցանկությունը»: Որպեսզի ինչ-որ կերպ գնահատվի ընդգրկված դիտարկման արդյունքների չեզոքությունը, կարելի է «դրսից» ստուգել հարցազրույցի, հարցաթերթիկի միջոցով: Կամ կարելի է մի քանի օրով ընդհատել դիտարկումը, հետո նոր աչքերով դիտարկել:

Ընդգրկված դիտարկումը լավ է վերահսկվում դիտարկվողների թվի մեծացմամբ, որոնք միաժամանակ ուսումնասիրում են նույն իրավիճակը:

Նրանց գրանցումների համեմատումը հնարավորություն է տալիս վերացնել որևէ օժանդակ ազդեցության հետևանքները, բացահայտել որևէ մեկի մոտ մեռյալ կետերը՝ չդիտված իրադրությունը: Եթե մի քանի դիտարկողների մասնակցությունը մինչև վերջ հնարավոր չէ, ապա ցանկալի է գոնե սկզբում:

***Մասնակից - դիտարկող***. Դա դիտարկման այն ձևն է, որի ժամանակ դիտարկողը չի թաքցնում իր դերը և խմբի համաձայնությամբ դիտարկում է նրա կյանքը որոշակի ժամանակի ընթացքում: Այս դեպքում շատ լավ դերում է ձեռնարկության սոցիոլոգը: Լինելով նույն ձեռնարկության անդամ՝ նա հեշտությամբ կարող է ընդգրկվել խումբ՝ չթաքցնելով իր հետազոտական հետաքրքրությունները:

***Դիտարկող- մասնակից*** դիտարկումը կրում է ավելի ձևական բնույթ:Կապը խմբի անդամների հետ նվազագույնն է, դիտարկողը չի թաքցնում իր գիտական նպատակները: Որպես օրինակ կարող է ծառայել հարցազրույցը, որի ժամանակ հետազոտողը դիտում է հարցվողին:

Սա շատ բաներով նման է չընդգրկված դիտարկմանը:

Դիտարկվողները չգիտեն հետազոտողի խնդիրների մասին: Հնարավոր է, որ չիմանան, որ օբյեկտ են:

Ըստ անցկացման տեղի և կազմակերպման պայմանների դիտարկումները լինում են դաշտային և լաբորատոր:

***Դաշտային դիտարկումը*** կատարվում է բնական և կյանքի ռեալ իրավիճակներում, օբյեկտի հետ անմիջական կապի դեպքում: Սակայն բնական պայմաններում ցանկալի երևույթը երբեմն շատ հազվադեպ է դրսևորվում կամ դրսևորվում է փոքր հաճախականությամբ: Լաբորատոր պայմաններում հետազոտողը [illegible] առաջացումը և դի-

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



տարկել: Բացի այդ ***լաբորատոր դիտարկումը*** թույլ է տալիս անհամեմատ մեծացնել դիտարկման վերահսկումը, լայնորեն օգտագործել տեխնիկական միջոցներ:

Լաբորատոր դիտարկման հիմնական թերությունը պայմանների և միջավայրի անբնականությունն է, ինչը կարող է ավելորդ զգուշավորություն առաջացնել դիտարկվողների մոտ:

Ըստ դիտարկման կանոնավորության՝ կարելի է տարբերել ***սիստեմատիկ*** և ***պատահական*** դիտարկումներ:

Սիստեմատիկ դիտարկումը կանոնավոր դիտարկումներն են ժամանակի որևէ հատվածի ընթացքում:Դիտարկումը կարելի է կատարել՝

ա/ որևէ խմբի նկատմամբ մեկ ամսվա կամ տարվա ընթացքում

բ/ որևէ գործընթացի նկատմամբ տարբեր խմբերում

գ/ որևէ գործընթացի նկատմամբ որևէ խմբում:

Պատահական դիտարկումը նախօրոք չպլանավորված դիտարկումն է: Օրինակ որևէ պրոբլեմի դիտարկման ժամանակ հետազոտողը հանկարծ հանդիպում է այնպիսի երևույթի, որի ուսումնասիրումը պլանավորված չի եղել, բայց և որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այդպիսով դիտարկողը սկսում է գրանցել նոր երևույթ:

## Դիտարկման տեսակի որոշումը

Դիտարկման ոչ մի տեսակ առանձին հանդես չի գալիս: Սովորաբար հետախուզական փուլում օգտվում են չվերահսկվող, դաշտային դիտարկումից, որը կարող է լինել տարբեր աստիճանի ընդգրկվածության և կանոնավորության:

Նկարագրական հետազոտության, կոնկրետ էմպիրիկ նյութի հավաքման ժամանակ օգտվում են վերհսկվող սիստեմատիկ դիտարկումից, որը կարող է լինել տարբեր ընդգրկվածության:

Էքսպերիմենտալ հետազոտություններում օգտվում են վերահսկվող սիստեմատիկ դիտարկումից, որի ընդգրկվածությունը կախված է առարկայի յուրահատկությունից և դիտարկման պայմաններից: Ավելի հաճախ սա կարող է անցկացվել լաբորատոր պայմաններում:

Եթե դիտարկումը անցկացվում է ինչ որ տվյալների ստուգման նպատակով, ապա այն պետք է լինի վերահսկվող, սիստեմատիկ և անցկացվի այն պայմաններում, որոնցում հավաքվել են տվյալները:

Որքան բարդ, բազմաչափ է օբյեկտը, այնքան առանձնահատուկ են հետազոտության խնդիրները, և այդ դեպքում դիտարկումը ու վերահսկումը պետք է կատարվեն ինտենսիվ և խիտ:

## Արդյունքների գրանցում

Գրանցումը ցանկալի է, որ կատարվի տեղում և նույն պահին, որը միշտ չէ, որ հնարավոր է: Գրանցումը կրկնակի հսկողություն է .
1/ դիտարկողի նկատմամբ,
2/ դիտարկվող գործընթացում կամ իրավիճակում հնարավոր շեղումների նկատմամբ:

Կախված դիտարկման ձևից և պայմաններից՝ հարկավոր է ընտրել գրանցման ձևը: Միայն պետք է այնպես գրանցել, որ իրադարձության գրանցումը և դիտարկողի գնահատումը չխառնվեն իրար: Դիտարկման ընթացքում, չխախտելով էթիկական նորմերը, կարող են օգտագործվել տարբեր տեխնիկական միջոցներ:

## Դիտարկողին վերաբերվող պահանջները

Դիտարկողը պետք է լինի կրթված, լայն աշխարհայացքի տեր, հեշտ շփվող, ընդհանուր լեզու գտնող, համեստ: Բացի այդ դիտարկողը պետք է բարեխիղճ լինի: Նա միշտ պետք է հիշի, որ իր միջամտությունը գործընթացին նվազագույն լինի: Դիտարկումը պետք է միայն գիտական նպատակներ հետապնդի: Հարկավոր է մտածել նաև այն մասին, թե դիտարկումն ինչ հետևանքներ կարող է թողնել դիտարկվողների վրա: Դիտարկվողը պետք է նախնական պատրաստվածություն ունենա և համապատասխան հրահանգավորում ստանա:

## Դիտարկման ընթացքում առաջացող էթիկական խնդիրները

Դիտարկողն ընդհանուր առմամբ տեղեկություններ է հավաքում մարդկանց կյանքի տարբեր կողմերի մասին՝ փորձելով ականատես լինել դրանց: Սա արդեն շատ լուրջ էթիկական խնդիր է, որովհետև անհատը կարող է չցանկանալ ի ցույց դնել իր կյանքի որոշ կողմեր: Երբեմն դիտարկողը չի էլ հարցնում մարդկանց համաձայնությունը և ծածուկ ներխուժում է նրանց միջավայր ու դիտարկում նրանց վարքը: Պատահական չէ, որ նման դեպքերում դիտարկողն իրեն զգում է լրտեսի ու դավաճանի դերում, և անազնիվ դիտարկողը մեծ վնաս կարող է պատճառել դիտարկվողներին:

Ծածուկ, ընդգրկված դիտարկումների դեպքում դիտարկողը կարող է կանգնել երկընտրանքների առջև, որոնց էթիկական հետևանքները կարող են խիստ տարբեր լինել միմյանցից, հատկապես փակ խմբերի դիտարկման ժամանակ:

Սովորաբար լուրջ էթիկական խնդիրներ են ծագում կապված դիտարկման ժամանակ տեխնիկական միջոցներ օգտագործելու հետ: Մի կողմից դիտարկման արդյունքների հավաստիության և լրիվության պահանջը գայթակղում է հետազոտողներին լայնորեն օգտագործելու նման միջոցներ, մյուս կողմից՝ նման գործողությունների էթիկական վտանգավորությունը հետազոտողներին ստիպում է լրջո- [illegible] կամ ձեռնպահ մնալ:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



## Օգտագործված գրականության ցանկ

1. Գ.Ա.Պողոսյան Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում, Ե., 1987
2. Field Research: a Sourcebook and Field Manual. Ed. by R.G. Burgess. Routledge, 1994
3. Kidder L. H., Research Methods in Social Relations, London, 1981
4. Moser C. A., Kalton G., Survey Methods in Social Investigation, Dartmouth 1996
5. Selltiz, Jahoda, Deutsch, Cook Research Methods in Social Relations, Holt, Rinehart and Winston, 1967
6. Whyte W. F., Street Corner Society, London,1969

## ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

### Որակական հարցազրույցի էությունը

Հարցազրույցի հիմքում ընկած է զրույցի կամ վերբալ հաղորդակցման հաղորդակցությունը: Ի տարբերություն առօրյա զրույցի, զրուցակիցների դերերը սահմանված են և նորմավորված /հարցազրուցավար – հարցվող/:

Հարցազրույցը՝ դա որոշակի հարցաշարով անցկացվող զրույց է, որը ենթադրում է հարցազրուցավարի և հարցվողի ուղղակի և նպատակադրված հաղորդակցում անհրաժեշտ սոցիոլոգիական ինֆորմացիա ստանալու նպատակով:

Հարցազրուցավարի և հարցվողի միջև ստեղծվող ուղղակի հաղորդակցումն և հոգեբանական հարաբերությունները զգալի առավելություն են հանդիսանում այնպիսի ինֆորմացիա ստանալու համար, որի հավաքումն այլ քանակական և որակական մեթոդների միջոցով դժվար է կամ անհնարին:

Սոցիոլոգիական հարցազրույցների տեսակներն են՝

Ըստ ձևայնացման աստիճանի՝

1. Ձևայնացված /Structured/ - հարցազրույց՝ հարցերի ձևակերպումն ու հաջորդականությունը անփոփոխ է և ամրագրված հարցաթերթիկում: Սովորաբար լինում է 2 տեսակ՝
   - ստանդարտացված հարցազրույց բաց հարցերով, /որը նույնպես պատկանում է որակական մեթոդների դասին/,
   - ստանդարտացված հարցազրույց փակ հարցերով կամ քանակական հարցազրույց, երբ հարցից հետո հարցազրուցավարը նշում է պատասխանի բոլոր հնարավոր տարբերակները, իսկ հարցվողը պետք ընտրի նշվածից:
2. Կիսաստանդարտացված /Semi-Structured/ նախատեսված է միայն հիմնական հարցերի ցուցակը, հաջորդականությունը /որը, սակայն, կարող է փոփոխվել ըստ հարցնողի հայեցողության/, իսկ ստացված ինֆորմացիան հիմք է ծառայում աչխատանքային վարկածներ առաջադրելու համար:
3. Չձևայնացված կամ ազատ հարցազրույց /Unstructured/ Չունի նախապես պատրաստված պլան կամ ձևակերպված հարցեր, ունի միայն ընդհանուր թեմատիկ ուղղվածություն: Հարցազրուցավարին տրվում է զրույցը վարելու լրիվ ազատություն, նա կարող է անկախ ձևակերպել հարցեր, որոշել թեմայի ուղղվածությունը և խորությունը, զրույցի տևողությունը և հարցերի հաջորդականությունը:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



*Աղյուսակ 8*

**Հարցազրույցի տեսակները սոցիոլոգիական հետազոտություններում**

| Հարցազրույցի տեսակը | Բնութագրությունը | Առավելությունները | Թերությունները |
|---|---|---|---|
| 1. Ոչ ֆորմալ հարցազրույց /զրույց/ | Հարցերը ծագում են հենց հարցազրույցի ընթացքում: Հարցաշարը նախապես չի մշակվում: Հարցերը նույնիսկ կարող է տարբեր լինել, որ հարցազրույցը տևի: Լայն կիրառում ունի, հատկապես որպես ներգրավված դիտման մաս: | Բացահայտում է տվյալ հարցի համապատասխանությունը իրավիճակին, տեղին լինելը: հարցազրույցն հիմնվում է և ծագում է դեպքի իրավիճակից: հարցազրույցը կարող է համապատասխանեցնել պարագաներն ու անհատներին: | Համախմբվում է տարբեր տեսակի ինֆորմացիա տարբեր մարդկանցից տարբեր հարցերի միջոցով: Քիչ համակարգված է; տվյալների հավաքն ու վերլուծությունը բավականին դժվարացված են: |
| 2. Կիսա ձևայնացված հարցազրույց /հարցաշարի օգտագործմամբ/ | Թեմաներն ու հիմնահարցերն պատրաստվում են նախապես: Իսկ հարցերի հաջորդականությունն ու կապակցվածությունը որոշում է հարցազրուցավարը հարցազրույցի ընթացքում: | Հարցաշարի օգտագործումը բարձրացնում է տվյալների բազմակողմանիությունը և ինֆորմացիայի հավաքման ինչ-որ չափով ավելի համակարգված է դառնում: Բացթողումները կանխատեսելի են և տրամաբանորեն հաշվի են առնվում: Հարցազրույցի ընթացքը մնում է բնական և իրավիճակին համապատասխան: | Կարևոր և հետաքրքրող թեմատիկ բաժինները և հարցերը կարող են անուշադրության մատնվել, անտեսվել: Հարցազրուցավարի ինքնուրույնությունն ու ճկունությունը հարցերի հաջորդականության և համապատասխանության հարցում տարբեր հարցվողների հարցումից հետո կարող է իջեցնել պատասխանների համադրելի լինելը: |
| 3.Ստանդարտացված հարցազրույց բաց հարցերով | Նախօրոք որոշվում են հարցերի հաջորդականությունն ու թեմատիկ բլոկները: Բոլոր հարցվողներին տրվում են միևնույն հիմնական հարցերը նույն ընթացակարգով: | Հարցվողները պատասխանում են միևնույն հարցերին, ինչը բարձրացնում է պատասխանների համադրելու հնարավորությունը: Իջեցնում է հարցազրուցավարի ներազդման էֆեկտը և նախապատրաստվածությունը: Հեշտացնում է տվյալների հավաքն ու վերլուծությունը: | Պակաս ճկուն է անհատների դարձվածքների կամ բացահայտման հարցում: Հարցերի խիստ ձևայնացված հաջորդականությունը ու ձևակերպումը սահմանափակում է զրույցի բնական լինելը: |
| 4. Փակ քանակական հարցազրույց | Հարցերը և պատասխանները, կատեգորիաները որոշվում են նախօրոք: Պատասխանները ֆիքսվում են, հարցվողները ընտրում են պատասխանը նշված տարբերակներից: | Տվյալների վերլուծությունը հեշտացված է, պատասխանները հեշտությամբ համախմբված և համադրված: Կարճ ժամանակում հարցման կարող են ենթարկվել մեծ թվով հարցվողներ: | Հարցվողները ստիպված են ընտրել առաջարկված տարբերակներից, նվազեցնելով իրենց կարծիքը և զգացմունքները հետազոտության կատեգորիաներին, որոնք ընկալվում են որպես վերանձնային, անհամապատասխան և մեխանիկական: Հարցվողի իրական կարծիքը կարող է շեղվել, խեղաթյուրվել, քանի որ սահմանափակ է պատասխան տալու հնարավորությունը: |

Եթե քանակական հարցազրույցը հնարավորություն է տալիս ստանալ ինչ-քա՞ն, որքա՞ն, ի՞նչ չափով հարցերի պատասխանը, ապա որակական հարցազրույցը պատասխանում է Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով հարցերին: Որակական հարցազրույցի մեթոդաբանությունը, ի տարբերություն քանակականից, ոչ ստանդարտացված բնույթ ունի: Այս մեթոդի միջոցով կարելի է չափել երևույթի ֆենոմենոլոգիան, բացահայտել պատճառա-հետևանքային կապերը: Մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ վերջինիս միջոցով հնարավոր ուսումնասիրել պրոբլեմը իր բազմազանությամբ և խորությամբ: Որակական հարցազրույցի ընդհանուր ռազմավարությունը ենթադրում է առանձին սուբյեկտների օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական փորձի խորացված ուսումնասիրություն:

Որակական հարցազրույցի վարման կարգը ենթադրում է զրույցի աստիճանաբար թեժացում, անմիջական մթնոլորտ ստեղծելու նպատակով, որից հետո հարցվողի մոտ ստեղծվում հետաքրքրվածություն տվյալ թեմայի նկատմամբ, ինչը թույլ է տալիս վարել զրույցը ըստ մշակված պլանի:

## Որակական հարցազրույցի վարման փուլերը՝

1. Առաջին կոնտակտի ստեղծում: Նպատակն է՝ զրույցի համար ստեղծել բարենպաստ մթնոլորտ: Ընդգրկում է ծանոթություն, հարցազրուցավարի ներկայացումն, թեմայի ընդհանուր բնութագրում:
2. Կոնտակտի ամրապնդում և առաջին հարցերը ըստ հարցազրույցի պլանի: Այս փուլում ընդհանուր խուզարկում է կատարվում՝ փաստագրային ինֆորմացիայի հավաքում /կյանքի պայմաններ, պատկանելությունների նկարագրում/: Այս փուլում կարևոր է ճշտել, որ տվյալ տեղեկատվությունը հետաքրքիր է և կարևոր: Այս փուլում խիստ արգելված է ցուցադրել հարցվողի իրազեկության վերաբերյալ որևէ կասկած կամ անվստահություն:
3. Անցում հարցազրույցի հիմնական հարցերին: Այս փուլը սկսվում է որոշակի նախապատրաստումից հետո՝ Օր.՝ Այժմ անցնենք մեր զրույցի կարևոր մասին: Այս փուլում տրվում են հիմնականում մոտիվացիոն /դրդապատճառային/ հարցեր: /Դուք համակրում ե՞ք կուսակցությանը: / Այս տիպի հարցերը առավել դժվար են, և հարցազրուցավարից պահանջում են հատուկ տեխնիկաների կիրառում / ստուգող կամ անդեմ հարցեր, ըհը-ըհը մեթոդ, կապված, պատասխանի սխալ վերարտադրում/:
4. Կորցրած կոնտակտի արագ վերականգնում: Եթե տարբեր հանգամանքների /ա. հարցվողը իրազեկ չէ, կամ տեղեկացված չէ տվյալ հարցի շուրջ; բ. չի հասկանում հարցի նպատակն կամ չի կարողանում ձևակերպել պատասխանը; գ. հարցը զգայական է և հարցվողը կաշկանդվում է խոսել այդ թեմայով/ այդ պատճառով հարցազրուցավարի և ռեսպոնդենտի միջև հաղորդակցությունը խափանվում է, այն պետք է վերականգնվի ավելի թեթև հարցերին անցնելու միջոցով:
5. Զրույցի ավարտ: Ավարտման փուլում հարցազրուցավարը կարող է վերադառնալ որոշ հարցերի, որոնց վերաբերյալ ստացել էր ոչ լիարժեք պատասխան: Երբ հարցաշարը սպառված է, հարցվողը տալիս է որոշ տեղեկատվություն իր մասին: Հարցազրուցավարը շնորհակալություն է հայտնում կարևոր և հետաքրքիր զրույցի համար և թույլտվություն է խնդրում անհրաժեշտության դեպքում նորից դիմել հարցվողին:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



## Հարցերի տեսակները որակական հարցազրույցում

- Expirience/ Behavior Questions - փորձ/ վարքին ուղղված հարցեր /եթե մեկ օր Ձեզ հետ անց կացնեի, ի՞նչ կտեսնեի /
- Opinion/ Belief Questions - կարծիք/համոզմունքներին - ուղղված հարցեր /ի՞նչ եք կարծում, ձե՞ր կարծիքով /
- Feeling Questions - զգացմունքային հարցեր /ինչպիսի՞ զգացմունքներ ունեք /
- Knowledge Questions - գիտելիքներին ուղղված հարցեր /ուղղված այն փաստագրային տեղեկություններին, որոնք ունի ռեսպոնդենտը /
- Sensory Questions - զգայական հարցեր /ի՞նչ եք տեսել, լսել, շոշափել, համտեսել, զգացել /
- Background/Demographic Questions - կենսագրական տվյալներ /սեռ, տարիք, կրթություն, զբաղմունք /

## Որակական հարցազրույցի տեսակները

Ըստ անցկացման տեխնոլոգիայի որակական հարցազրույցները իրենց առանձնահատկություններով դասակարգվում են կախված հետազոտության նպատակներից՝

- Depth Interview - խորին հարցազրույց՝ ենթադրում է պրոբլեմի բազմակողմանի և խորին ուսումնասիրություն, պատճառա-հետևանքային կապերի բացահայտում
- Biographic Interview - կենսագրական հարցազրույց՝ հարցվողի կյանքի մասին ազատ պատմություն: Թեմատիկ բլոկերը համապատասխանում են անձի կյանքի հիմնական փուլերին /«մանկություն», «պատանեկություն», «ամուսնություն» և այլն/
- Focused Interview - ֆոկուսավորված հարցազրույց՝ նպատակն է ուսումնասիրել հարցվողի կարծիքը որևէ կոնկրետ առաջադրված իրավիճակի վերաբերյալ:
- Etthnographic Interview - ազգագրական հարցազրույց՝ որոշակի սոցիալական հանրության ներկայացուցչի առօրյա պրակտիկայի ուսումնասիրությունը նրա մշակույթի տեսանկյունից /նորմեր, արժեքներ, լեզու, դիցաբանություն/

*Հարցազրույցի Արվեստը*

## Մի քանի խորհուրդ հարցազրուցավարներին

***Ինչպես խթանել հարցվողին ավելի շատ տեղեկություն հայտնելու***

- Լուռ հարցաքննում
- «Արձագանքային» հարցաքննում
- «Ըհը-ըհը» հարցաքննում
- Հարցաքննում «Երկար հարցերի միջոցով»
- Հարցաքննում զրույցը վարելու եղանակով
- Մեղմ ընդհատում
- Փուլավոր պնդումներ

Եթե քանակական հարցազրույցը հնարավորություն է տալիս ստանալ ինչ-քա՞ն, որքա՞ն, ի՞նչ չափով հարցերի պատասխանը, ապա որակական հարցազրույցը պատասխանում է Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով հարցերին: Որակական հարցազրույցի մեթոդաբանությունը, ի տարբերություն քանակականից, ոչ ստանդարտացված բնույթ ունի: Այս մեթոդի միջոցով կարելի է չափել երևույթի ֆենոմենոլոգիան, բացահայտել պատճառա-հետևանքային կապերը: Մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ վերջինիս միջոցով հնարավոր ուսումնասիրել պրոբլեմը իր բազմազանությամբ և խորությամբ: Որակական հարցազրույցի ընդհանուր ռազմավարությունը ենթադրում է առանձին սուբյեկտների օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական փորձի խորացված ուսումնասիրություն:

Որակական հարցազրույցի վարման կարգը ենթադրում է զրույցի աստիճանաբար թեժացում, անմիջական մթնոլորտ ստեղծելու նպատակով, որից հետո հարցվողի մոտ ստեղծվում հետաքրքրվածություն տվյալ թեմայի նկատմամբ, ինչը թույլ է տալիս վարել զրույցը ըստ մշակված պլանի:

## Որակական հարցազրույցի վարման փուլերը`

1. Առաջին կոնտակտի ստեղծում: Նպատակն է` զրույցի համար ստեղծել բարենպաստ մթնոլորտ: Ընդգրկում է ծանոթություն, հարցազրուցավարի ներկայացումն, թեմայի ընդհանուր բնութագրում:
2. Կոնտակտի ամրապնդում և առաջին հարցերը ըստ հարցազրույցի պլանի: Այս փուլում ընդհանուր խուզարկում է կատարվում՝ փաստագրային ինֆորմացիայի հավաքում /կյանքի պայմաններ, պարտականությունների նկարագրում/: Այս փուլում կարևոր է շեշտել, որ տվող տեղեկատվությունը հետաքրքիր է և կարևոր: Այս փուլում խիստ արգելված է ցուցադրել հարցվողի իրազեկության վերաբերյալ որևէ կասկած կամ անվստահություն:
3. Անցում հարցազրույցի հիմնական հարցերին: Այս փուլը սկսվում է որոշակի նախապատրաստումից հետո` Օր.` Այժմ անցնենք մեր զրույցի կարևոր մասին:

Այս փուլում տրվում են հիմնականում մոտիվացիոն /դրդապատճառային/ հարցեր: /Դուք համակրում ե՞ք կուսակցությանը: / Այս տիպի հարցերը առավել դժվար են, և հարցազրուցավարից պահանջում են հատուկ տեխնիկաների կիրառում / ստուգող կամ անդեմ հարցեր, ըհը-ըհը մեթոդ, կապված, պատասխանի սխալ վերարտադրում/:

4. Կորցրած կոնտակտի արագ վերականգնում: Եթե տարբեր հանգամանքների /ա. հարցվողը իրազեկ չէ, կամ տեղեկացված չէ տվյալ հարցի շուրջ; բ. չի հասկանում հարցի նպատակն կամ չի կարողանում ձևակերպել պատասխանը; գ. հարցը զգայական է և հարցվողը կաշկանդվում է խոսել այդ թեմայով/ այդ պատճառով հարցազրուցավարի և ռեսպոնդենտի միջև հաղորդակցությունը խափանվում է, այն պետք է վերականգնել ավելի թեթև հարցերին անցնելու միջոցով:
5. Զրույցի ավարտ: Ավարտման փուլում հարցազրուցավարը կարող է վերադառնալ ո- [illegible] Երբ հարցա-

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



շարը սպառված է, հարցվողը տալիս է որոշ տեղեկատվություն իր մասին: Հարցազրուցավարը շնորհակալություն է հայտնում կարևոր և հետաքրքիր զրույցի համար և թույլտվություն է խնդրում անհրաժեշտության դեպքում նորից դիմել հարցվողին:

## Հարցերի տեսակները որակական հարցազրույցում

- Expirience/ Behavior Questions - փորձ/ վարքին ուղղված հարցեր /եթե մեկ օր Ձեզ հետ անց կացնեի, ի՞նչ կտեսնեի /
- Opinion/ Belief Questions - կարծիք/համոզմունքներին - ուղղված հարցեր /ի՞նչ եք կարծում, ձե՞ր կարծիքով /
- Feeling Questions - զգացմունքային հարցեր /ինչպիսի՞ զգացմունքներ ունեք /
- Knowledge Questions - գիտելիքներին ուղղված հարցեր /ուղղված այն փաստագրային տեղեկություններին, որոնք ունի ռեսպոնդենտը /
- Sensory Questions - զգայական հարցեր /ի՞նչ եք տեսել, լսել, շոշափել, համտեսել, զգացել /
- Background/Demographic Questions - կենսագրական տվյալներ /սեռ, տարիք, կրթություն, զբաղմունք /

## Որակական հարցազրույցի տեսակները

Ըստ անցկացման տեխնոլոգիայի որակական հարցազրույցները իրենց առանձնահատկություններով դասակարգվում են կախված հետազոտության նպատակներից`

- Depth Interview - խորին հարցազրույց` ենթադրում է պրոբլեմի բազմակողմանի և խորին ուսումնասիրություն, պատճառա-հետևանքային կապերի բացահայտում
- Biographic Interview - կենսագրական հարցազրույց` հարցվողի կյանքի մասին ազատ պատմություն: Թեմատիկ բլոկերը համապատասխանում են անձի կյանքի հիմնական փուլերին /«մանկություն», «պատանեկություն», «ամուսնություն» և այլն/
- Focused Interview - ֆոկուսավորված հարցազրույց` նպատակն է ուսումնասիրել հարցվողի կարծիքը որևէ կոնկրետ առաջադրված իրավիճակի վերաբերյալ:
- Etthnographic Interview - ազգագրական հարցազրույց` որոշակի սոցիալական հանրության ներկայացուցչի առօրյա պրակտիկայի ուսումնասիրությունը նրա մշակույթի տեսանկյունից /նորմեր, արժեքներ, լեզու, դիցաբանություն/

*Հարցազրույցի Արվեստը*

## Մի քանի խորհուրդ հարցազրուցավարներին

***Ինչպես խթանել հարցվողին ավելի շատ տեղեկություն հայտնելու***

- Լուռ հարցաքննում
- «Արձագանքային» հարցաքննում
- «Ըհը-ըհը» հարցաքննում
- Հարցաքննում «Երկար հարցերի միջոցով»
- Հարցաքննում զրույցը վարելու եղանակով
- Մեղմ ընդհատում
- Փուլավոր պնդումներ

***Ինչպես վերահսկել հարցազրույցի ընթացքը***

- Նախապես իմացեք, թե ինչ եք ցանկանում պարզել
- Տվեք ճիշտ հարց՝ Ձեր ցանկացածը իմանալու համար
- Տվեք համապատասխան հիմնավորում՝ բառային կամ ոչ բառային տեսքով:
- Մի վախեցեք մեղմ ընդհատելուց, երբ հարցվողը շեղվում է քննարկվող նյութից:

***Տեղեկատուի հետ զրույցը վարելու հիմնական հմտությունները***

- Տվեք հարցեր
- Լսեք խոսելու փոխարեն
- Զբաղեցրեք պասիվ դեր
- Բառերով արտահայտեք Ձեր հետաքրքրվածությունը
- Ոչ բառային միջոցներով ցուցադրեք Ձեր հետաքրքրվածությունը

***Չեզոքություն և զրուցակիցների միջև զգացմունքային կապի ստեղծում***

- Լսեք առանց եզրակացություններ անելու
- Մի ցուցադրեք նախապատվություն, դժգոհություն, ցնցվածություն կամ զայրույթ
- Հարցվող անձի նկատմամբ հարգանք ցուցաբերեք
- Զգացնել տվեք, որ պատասխանողի գիտելիքները, փորձը և վերաբերմունքը կարևոր են Ձեր համար:
- Զգայունություն ցուցաբերեք, աշխատեք չվերածել զրույցը հարցաքննման:

### Տեղեկատուի հետ Հարցազրույց

- Առավել հաճախ է կիրառվում որակական հետազոտությունների ժամանակ
- Նպատակն է՝ ընդհանրացնել ստացված տվյալները, որպեսզի բացահայտել հետաքրքրող հարցերի հեռանկարները:

Տեսակները՝

Ձևայնացված և կիսաձևայնացված

### Հարցազրույցի Վերահսկման մակարդակներ

Ոչ ֆորմալ

Ձևայնացված

Կիսաձևայնացված

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



### Ձևայնացված հարցազրույց

- Լայն կիրառում ունի մշակութային մարդաբանության մեջ (ներգրավված դիտման վերջին փուլում)
- Այս տեսակի համար դժվար չէ նախօրոք հարցաշար պատրաստել, բավական է հիմնվել ռեսպոնդենտի սեփական արտահայտությունների հաջորդականության վրա:
- Միևնույն ռեսպոնդենտը կարող է հարցվել մի քանի անգամ:

### Ձևայնացված հարցազրույցի կիրառման նպատակները

- Նպաստում է կիսահարցազրույցի ուղեցույց և հարցաշար մշակելու համար:
- Արդյունավետ է ռեսպոնդենտի հետ նախնական զգացմունքային կապ հաստատելու համար և անցնելու ավելի կառուցվածքային հարցազրույցի:
- Օգտակար է «նուրբ» թեմաներ քննարկելուց:

### Կիսաձևայնացված հարցազրույց

- Հարցազրույց հիմնված հարցազրույցի ուղեցույցի վրա
- Ընդունված է, երբ նույն ռեսպոնդենտի հետ երկու անգամ հանդիպելը հավանական չէ:
- Օգնում է ստանալ հուսալի, համեմատելի տեղեկություններ

## Հարցազրույց փորձագետի հետ

### Հիմնական խնդիրներ

- Նպատակը՝ ստանալ ավելի բանիմաց, իրազեկ, «ներսի մարդու» տեսակետը
- Ինչպե՞ս հաստատել զգացմունքային կապ
- Ո՞վ է հիմնականում հանդիսանում փորձագետ
- Ի՞նչ է հարկավոր փորձագետ լինելու համար:
- Քաջ տեղյակ լինել առարկայի մասին
- Մուտք տրամադրել անհրաժեշտ տեղեկություններին
- Հայտնաբերել փորձագետին

## Փորձագիտական հարցազրույցի անհրաժեշտությունը

- Հետազոտության խնդիրների պարզաբանումը
- Մեկնաբանություն
- Հետազոտության գործիքի փորձարկումը /ապրոբացիա/
- Մեթոդաբանության մշակում

## Հարցազրույցի անցկացման վայրը

- Ռեսպոնդենտի տունը
- Ռեսպոնդենտի աշխատավայրը
- Ոչ պաշտոնական միջավայրում
- Մեկուսացված և չընդհատվող զրույցի հնարավորություն ունեցող վայր:



## Հարցազրույցի տեխնիկան

- Պատրաստություն
- 30-90 րոպե
- Ներկայացում/Նախաբան
- Ընդհանուր բնութագիր և գաղտնապահություն/անանունություն
- Ուղեցույց/ հարցաշար
- Գրառումներ
- Օգտագործվելիք գործիքներ

## Օգտագործված գրականության ցանկ.

1. Denzin N. Interpretive Biography. Newbury Park: Sage, 1989
2. Jones, S. Depth Interviewing. In R.Walker (Ed.), Applied qualitative research. Brookfield, VT: Gower, 1985
3. Merton R. K., M.Fiske, Patricia L. Kendall. The Focused Interview. A Manual of Problems and Procedures. Glencoe. IL, Free Press, 1957
4. Research Methods in Anthropology, Field Notes: How to Take, Code and Manage Them.
5. В.А. Ядов, Стратегия социологического исследования. Москва: Добросвет, 1999

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

# ՈՐԱԿԱԿԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՄԵԹՈԴ

## Խմբային հարցազրույցի մեթոդը սոցիոլոգիական մեթոդների համատեքստում

Ֆոկուս խմբի մեթոդը գտնվում է ինչպես ավանդական սոցիոլոգիայի, այնպես էլ փորձարարական հոգեբանության սահմաններում: Ֆոկուս խմբերը դասվում են սոցիոլոգիական որակական մեթոդներին:

Համակարգված սոցիոլոգիական էմպիրիկ նյութի օգտագործումը սոցիոլոգիայում սկիզբ է առնում 20-րդ դարի սկզբներին: Էմպիրիկ տվյալների հիմնական տեսակներն այն ժամանակ նամակներն էին, օրագրերը, դատական գործերի նյութերը, բանավոր պատմությունները, իսկ ավելի ուշ՝ ինքնակենսագրությունները: Այսպիսով, սոցիոլոգիայի զարգացման առաջին փուլը, օգտագործվող մեթոդների տեսանկյունից, կարելի է բնութագրել որպես «դորակական»:

1920-ականներին ԱՄՆ-ում մշակվեցին և լայն տարածում գտան քանակական ստանդարտացված հարցումները: Զանգվածային հարցումներն իրենց առաջացման պահից կրում էին ոչ միայն կիրառական, այլ նաև կոմերցիոն և քաղաքական բնույթ: Սակայն 1950-ական թվականներին հենց կոմերցիոն ոլորտը գիտակցեց, որ միայն քանականական մեթոդները բավարար չեն: Ժամանակակից ֆոկուս խմբերին նվիրված մենագրությունների հեղինակները գտնում են, որ ԱՄՆ-ում ֆոկուս խմբերի օգտագործումը սկսվում է մարկետինգային հետազոտություններից:

Որպես ֆոկուս խմբերի մեթոդի հիմնադիրներ կարելի է նշել Ռ.Մերտոնին, Մ. Ֆիսկեին և Պ.Կենդալլին: Իրենց «Ֆոկուսացված հարցազրույց» աշխատությունում հեղինակները բացատրում են, որ. *«ֆոկուս խումբը տարբերվում է այլ խմբային հարցազրույցի տեսակներից: Առաջինը՝ ֆոկուս խմբի մասնակիցները պետք է լինեն որոշակի իրավիճակի մասնակիցներ. նրանք դիտել են կինոնկար, կարդացել են հոդված կամ գիրք, մասնակցել են հոգեբանական գիտափորձի, կամ որևէ սոցիալական իրավիճակի / ցույցի: Երկրորդը՝ այդ սոցիալական իրավիճակի բնույթը, ընթացքը և ընդհանուր կառուցվածքը նախապես վերլուծված են սոցիոլոգի կողմից, ինչի հիման վրա առաջադրվել են որոշակի վարկածներ: Երրորդը՝ այդ վերլուծության հիման վրա մշակվում է հարցազրույցի անցկացման պլանը: Եվ չորրորդը՝ հարցազրույցը ֆոկուսացվում է նախապես վերլուծված իրավիճակի վերաբերյալ մարդկանց սուբյեկտիվ ապրումների վրա»:*

Ֆոկուս խմբի վարումը պարտադրում է որոշակի տեսական գիտելիքների և հասկացությունների իմացություն: Դրանցից են, օրինակ, խմբի սոցիոդինամիկան, որը նկարագրվել է հոգեբան Վեռների կողմից: Ըստ նրա սո-



ցիոդինամիկայի մոդելն իր մեջ ներառնում է երեք փուլ.

1/ **չդիֆերենցացված հանրություն**, երբ խումբը հավաքված է առաջին անգամ և ներկայացնում է ոչ դիֆերենցացված ամբողջության տեսքով,

2/ **դիֆերենցացված հանրություն,** երբ խմբի անդամները սկսում են տարբերվել միմյանցից,

3/ **աստիճանաբար ինտեգրացված հանրություն**, երբ սկսվում է ձևավորվել խմբի անդամների հարաբերությունների համակարգը: Խմբի գերիշխող անդամները արտահայտում են քննարկման առավել ուժեղ փաստարկներ: Խմբի այլ անդամները փորձում են արտահայտվել ոչ այնքան կատեգորիկ ձևով: «Ամենահանդուրժողները» լռում են մինչև չստանան լիդերների խրախուսանքը և հավանությունը: Քայլ առ քայլ խմբի անդամները սկսում են գիտակցել իրենց հայացքների նմանությունը այլ անդամների տեսակետների հետ, և դրա հիման վրա ձևավորվում են ենթախմբեր:

Մեկ այլ կարևոր հասկացություն է՝ **«տրիանգուլյացիայի հասկացությու-նը»**, որը բնութագրում է այն իրավիճակը, երբ խմբային քննարկման ընթացքում բախվում են երկու կամ ավել մրցակցող կամ համակերպվող տեսակետներ:

## Ֆոկուս խմբերի ձևավորման սկզբունքները.

Խմբերը ձևավորելիս հետազոտողը պետք է հետևի որոշակի կանոնների.
- խմբերի անդամների քանակը կարող է տատանվել 6-12 սահմաններում,
- խմբերի կազմը պետք է լինի համասեռ:

Գոյություն ունեն որոշակի մարդկանց կատեգորիաներ, որոնք չպետք է ներգրավվեն խմբերի մեջ: Դրանք են՝
- ֆոկուս խմբերի ընթացակարգին ծանոթ մարդիկ,
- մոդերատորին ծանոթ մարդիկ,
- միմյանց հետ ծանոթ մասնակիցներ,
- փորձագետներ:

Անցկացվող ֆոկուս խմբային հետազոտությունը ընդգրկում է 4-8 ֆոկուս-խմբեր:

## Ֆոկուս խմբերի կազմակերպումը

Ֆոկուս խմբի անցկացման հաջողությունը կախված է նաև հարցազրույցի անցկացման վայրի ճիշտ ընտրությունից և բավարար քանակով մարդկանց ներկայությունից: Այսինքն, հաջող ֆոկուս խումբ անկացնելու համար հարակավոր է նաև ունենալ՝
- հարմարավետ սենյակ / պետք է լինի անաղմուկ, մասնակիցների մոտ պետք է չառաջացնի հոգեբանական ճնշում կամ այլ բացասական հույզեր, չպետք է շեղի մասնակիցների ուշադրությունը/

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

- բավարար թվով մասնակիցներ /սովորաբար մասնակիցներին վճարում են ներկայությունը ապահովելու համար, հրավիրվում են 20% ավել մարդիկ, որպեսզի մասնակիցների չգալու դեպքում պահպանվի դրանց օպտիմալ քանակը/
- թեթև հյուրասիրություն /ջուր, սուրճ, թեյ/

## Խմբի մասնակիցների ընտրության չափանիշները

*Գոյություն ունեն համախմբության ձևավորման երեք ռազմավարություն.*
- Լայն համախմբություններ /օրինակ, ամբողջ աշխատունակ բնակչությունը/
- Նեղ համախմբություններ /որոշ ապրանքից օգտվողները/
- Նեղ փնտրման համախմբություններ

*Խմբի մասնակիցների ընտրության մեթոդները հետևյալն են.*
- Նպատակաուղղված ընտրանքի մեթոդ
- Պատահական ընտրանքի մեթոդ
- Ֆիլտրող հարցաթերթի միջոցով
- «Ձնակույտի» մեթոդ
- Պատրաստի ցուցակների հիման վրա
- Հատուկ ընտրանքի ձևավորման հիման վրա

## Ֆոկուս խմբի քննարկման հարցաշարը

*Ֆոկուս խմբի հարցաշարի ստեղծման գործընթացը կարող է ընդգրկել հետևյալ փուլերը.*
- ուղեղների գրոհ,
- հարցերի ձևակերպում,
- բաց հարցերի օգտագործում,
- ինչու՞ հարցից խուսափում,
- զգույշ լինել օրինակների մեջբերումներից:

*Հարցազրույցը սկսելուց առաջ հարկավոր է մշակել հարցերի ճիշտ հաջորդականություն: Այդ նպատակով անհրաժեշտ է անել հետևյալը.*
- Ընդհանուր հարցերը պետք է նախորդեն մասնավոր հարցերին,
- Դրական հարցերը պետք է նախորդեն բացասական երանգ ունեցող հարցերին:

Հարցազրույցը սկսելուց առաջ հարկավոր է նախ և առաջ կատարել հարցերի փորձարկում:

*Քննարկման հարցաշարը կազմելիս պետք է պահպանել հետևյալ սկզբունքները.*
- Հարցերում օգտագործված լեզուն պետք է լինի մարդկային
- Հարցերը պետք է լինեն պարզ
- Հարցերը պետք է լինեն կարճ



- Հարցերը պետք է հեշտ արտասանվեն
- Հարցերը պետք է լինեն բաց
- Հարցերը պետք է ունենան միանշանակ բովանդակություն

*Հարցաշարը պետք է.*
- ունենա թեթև սկիզբ,
- լինի շարունակական,
- շարժվի ընդհանուր հարցերից դեպի մասնավոր:

*Ֆոկուս խմբի ժամանակ տրվում են հետևյալ տեսակի հարցերը.*
- հարցազրույցին հրավիրող հարցեր,
- ներածական հարցեր,
- անցումային հարցեր,
- առանցքային հարցեր,
- ավարտող հարցեր,
- հարցեր, որոնք խթանում են մարդկանց մասնակցությունը:

Ֆոկուս խմբերի անցկացման ընթացքում կարևոր է նաև ***ժամանակի սահմանումը և դրա պահպանումը***: Ժամանակի սահմանման ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալը
- Հարցերի բարդությունը
- Հարցերի կատեգորիան
- Քննարկվող թեմայի վերաբերյալ մասնակիցների պատրաստվածության աստիճանը
- Խմբի մեծությունը
- Քննարկման խորության աստիճանը

## Մոդերատորի նկատմամբ առաջադրվող պահանջները

*Խմբի հաջող աշխատանքը կախված է մոդերատորի մասնագիտական հմտություններից և անձնական հատկանիշներից: Մոդերատորը պարտավոր է .*
- տիրապետել քննարկման առարկային,
- ընտրել այնպիսի աշխատանքի ոճը, որը համապատասխանում է իր անձնային հատկանիշներին,
- խուսափել խմբի վարման ապակառուցողական ոճերից/շփոթված մոդերատոր, ամենաթող, չափից դուրս ակտիվ և ճնշող մոդերատոր, մոդերատորը, որը շատ գիտի, վատ է լսում և այլն/

*Լավ մոդերատորի հատկություններն են համարվում*
- քննարկման թելը չկորցնելու ընդունակությունը,

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

- քննարկման մասնակիցներին ոգևորելու ընդունակությունը,
- ժամանակի արդյունավետ օգտագործման կարողությունը:

*Խմբի աշխատանքային փուլերը.*
- աշխատանք մինչև խմբի սկիզբը /պատրաստվածության ստուգում, մասնակիցների հանդիպում, մասնակիցների քանակի հսկում/
- ներածական խոսք / մոտավորապես 40 վայրկյան/
- "սառույցի կոտրում" /10-15 րոպե/
- անցում քննարկման հիմնական մասին

## Ֆոկուս խմբի մասնակիցների դերերն հարցազրույցի ընթացքում

Մոդերատորը, վարելով ֆոկուս խումբը, պետք է գիտակցի մասնակիցների կողմից կատարվող դերերի էությունը, որպեսզի կարողանա ղեկավարել և հսկել խմբային գործընթացները: Սովորաբար, ֆոկուս խմբի աշխատանքի ընթացքում հանդիպում են հետևյալ կառուցողական և ապակառուցողական դերերը.

***Կառուցողական դերեր են կատարում հետևյալ մասնակիցները՝***
- կարծիքներ առաջնորդներ,
- մոդերատորի համագործակիցներ,
- զուսպ մասնակիցներ,
- ամաչկոտ մասնակիցներ:

***Ապակառուցողական դերեր են կատարում հետևյալ մասնակիցները՝***
- մոդերատորի մրցակիցները,
- գերիշխող մասնակիցները,
- մասնակից - առաքելություն կատարողը,
- մասնակից ընդիմադիրը,
- ճշգրտող մասնակիցը,
- խումբը ուրախացնող անդամը,
- անընդհատ շշնջացող անդամը,
- խմբի աշխատանքներին պասիվ մասնակիցը:

## Խմբային գործընթացը ղեկավարելու տեխնիկաներ

***Խմբային գործընթացը ղեկավարելու տեխնիկաներին են պատկանում.***
- խմբի անդամների մասնակցության հավասարակշռումը,
- կառուցողական լիդերության խթանումը,
- չափից դուրս աշխույժ փոխազդեցության հսկումը,
- ապակառուցողական վարքի դեմ պայքարը,
- ակտիվ լսելու կարողությունը:



Խմբային աշխատանքի ժամանակ, այն դեպքում, երբ բանավեճը դժվարությամբ է առաջ գալիս և զարգանում, կարելի է օգտագործել զոնդաժի հետևյալ մեթոդները
- լռության պահպանում,
- մարմնի լեզվի արդյունավետ օգտագործում,
- հարցերի վերահասցեագրում,
- նախորդ ասածի մեջբերում,
- մասնակիցներին ՛միմյանց հետ վեճի դրդելը՛
- մոդերատորի կողմից ստացած ինֆորմացիայի անհասկանալիության ցուցադրում,
- հակադրում/կոնֆրոնտացիա,
- ուղիղ հարցերի օգտագործում:

## Ֆոկուս խմբերի արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում

Ամբողջ ֆոկուս խմբի նյութը գրանցվում է ասիստենտի կողմից կամ ձայնագրվում է աուդիո կամ վիդեո ժապավենի վրա:

Ֆոկուս խմբերի հաշվետվությունը ընդգրկում է 3 փուլ
- սղագրությունների /տրանսկրիպցիաների/ փուլ
- առաջնային վերլուծության փուլ / որտեղ մոդերատոր վերլուծում է միայն իր կողմից վարած բոլոր խմբերում հանդիպող ընդհանուր օրինաչափությունները և միտումները; այս փուլին պետք է նախորդի վերլուծության հիմնական կատեգորիաների ձևակերպումը/,
- վերջնական վերլուծություն / որտեղ ուսումնասիրվում, նկարագրվում և համակարգվում է ամբողջ հետազոտության ընթացքում ստացված ինֆորմացիան/:

Վերջնական վերլուծությունը արտացոլվում է հաշվետության մեջ: Վերջինս պետք է ունենա համապատասխան կառուցվածք.
- Ներածություն
- Հետազոտության նպատակի և խնդիրների շարադրում
- Մեթոդաբանական խնդիրների նկարագրություն
- Արդյունքների վերլուծություն
- Առաջարկություններ
- Եզրակացություններ

## Օգտագործված գրականության ցանկ՝

1. Krueger Richard A., Casey Mary Anne . Focus Groups. A Practical Guide For Applied Research. SAGE publications, Inc. 2000
2. Merton Robert K., Fiske Marjorie, Kendall Patricia L.. The Focused Interview. A Manual of Problems and Procedures. THe Free Press, A Division of Macmillan Publishers. 1990

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

# ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

## 1. Ստանդարտացված հարցազրույցի սահմանումը և կիրառումը սոցիալական հետազոտություններում

Հարցազրույցը կարելի է սահմանել որպես սոցիալ-հոգեբանական փոխհարաբերություն՝ հետազոտողի և հարցվողի միջև: Ստանդարտացված հարցազրույցի դեպքում այս փոխհարաբերությունը միջնորդավորված է հարցաթերթով, որը ձևայնացնում և ուղղվածություն է տալիս հարցազրույցի ընթացքին: Այսինքն, ստանդարտացված հարցազրույցը միշտ ընթանում է նախօրոք որոշված թեմայի շուրջ, որը սովորաբար ներկայացվում է հարցաթերթում:

*Աղյուսակ 9*

*Սովորական զրույցի և հետազոտական հարցազրույցի համեմատական վերլուծություն:*

| Սովորական զրույց | Հարցազրույց |
|---|---|
| 1. Պատասխանները և հարցերը համեմատաբար հավասար են բաշխված զրուցակիցների միջև: | 1. Հարցազրուցավարը հարցնում է, իսկ հարցվողը պատասխանում է: |
| 2. Տեղի է ունենում կարծիքների և զգացմունքների բաց փոխանակում: | 2. Միայն հարցվողն է արտահայտում իր կարծիքը և զգացմունքները: |
| 3. Արտահայտվում են դատողություններ և փորձեր են արվում համոզել դիմացինին ընդունելու այդ տեսակետը: | 3. Հարցազրուցավարը չի արտահայտում որևէ դատողություններ և չի փորձում փոխել հարցվողի կարծիքը կամ համոզմունքները: |
| 4. Անձը կարող է արտահայտել խորը զգացմունքներ՝ թերապևտիկ լիցքաթափում ձեռք բերելու համար: | 4. Հարցազրուցավարը փորձում է կոնկրետ հարցերի պատասխաններ ստանալ: |
| 5. «Ռիտուալ» պատասխանները ընդունված են օրինակ՝ «հա», գլխով անել, «Ոնց ե՞ս» - «Լավ եմ» | 5. Հարցազրուցավարը ձգտում է խուսափել ռեակցիաներ ցուցաբերելուց, որոնք կարող են ազդել հարցվողի վրա, և միևնույն ժամանակ, փորձում է ստանալ իսկական, այլ ոչ թե «ռիտուալ» պատասխաններ: |
| 6. Տեղի է ունենում ինֆորմացիայի փոխանակում, որտեղ զրուցակիցները կարող են ուղղել միմյանց փաստացի սխալները: | 6. Հարցվողը տրամադրում է համարյա թե ողջ ինֆորմացիան: Հարցազրուցավարը չի ուղղում հարցվողի փաստացի սխալները: |



| | |
|---|---|
| 7. Թեմաները ծագում ու անհետանում են, զրուցակիցներից յուրաքանչյուրը կարող է առաջարկել նոր թեմա: Ֆոկուսը կարող է շեղվել, փոխել ուղղությունը: | 7. Հարցազրուցավարը ղեկավարում է հարցազրույցի ուղղվածությունը և տեմպը: Նա հարցվողի ուշադրության կենտրոնում է պահում հարցազրույցի թեման, որին չվերաբերող շեղումները կասեցվում են: |
| 8. Էմոցիոնալ ֆոնը կարող է փոխվել հումորից, ուրախությունից դեպի տխրություն, կատաղություն և այլն: | 8. Հարցազրուցավարը փորձում է պահպանել ողջ հարցազրույցի ընթացքում ջերմ, բայց լուրջ մթնոլորտ: |
| 9. Զրուցակիցը կարող է անտեսել կամ ուշադրություն չդարձնել որևէ հարցի, հնարավոր են նաև թռուցիկ պատասխաններ: | 9. Հարցվողները չեն կարող անուշադրության մատնել որևէ հարց և պետք է տան անկեղծ և մտածված պատասխաններ: |

Ստանդարտացված հարցազրույցները սովորաբար օգտագործվում են քանակական սոցիոլոգիական հետազոտություններում՝ պարզելու համար հասարակության լայն զանգվածների կարծիքը և դիրքորոշումները այս կամ այն երևույթի կամ գործընթացի վերաբերյալ:

Ստանդարտացված հարցազրույցներ անցկացնելու համար ձևավորում են հարցազրուցավարների թիմ, որն էլ իրականացնում է դաշտային աշխատանքները: Հարցազրույցների հաջողությունը կախված է ինչպես այդ թիմի աշխատանքից, այնպես էլ հարցաթերթիկի ճիշտ մշակումից: Ուստի մենք կքննարկենք ինչպես հարցաթերթիկի և դրանում ընդգրկված հարցերի մշակման սկզբունքները, այնպես էլ մանրամասնորեն կանդրադառնանք հարցազրուցավարի դերին, հարցազրույցի փուլերին և տեխնիկային: Մենք կելնենք այն հանգամանքից, որ ստանդարտացված հարցազրույցն անց է կացվում ընտրանքային համախմբության ներկայացուցիչների հետ, իրենց տանը՝ օգտագործելով ստանդարտացված հարցաթերթիկ: Նախքան մանրամասների ուսումնասիրմանն անցնելը, հարկ է նշել երկու էական հանգամանք:

*Նախ և առաջ* հարցազրուցավարն է հանդիսանում հետազոտողի և բնակչության միջև հիմնական միջնորդը: Հարցվողների արձագանքները հետազոտության վերաբերյալ կախված են նրանից, թե ինչպես են կատարել իրենց աշխատանքը հարցազրուցավարները, այսինքն ինչպես են նրանք անցկացրել հարցազրույցները:

Հարցազրուցավարներն ամբողջ օրն անց են կացնում՝ հանդիպելով անծանոթ մարդկանց, խնդրելով նրանց պատասխանել հարցերի, որոնք հնարավոր է այդքան էլ հետաքրքիր չեն նրանց համար, հետապնդելով նպատակներ, որոնք միշտ չէ, որ հասկանալի են, և ներկայանում են կազմակերպությունների կողմից, որոնց մասին մարդիկ կարող են և չիմանալ: Ուստի, հարցազրուցավարի կողմից այդ դժվարությունների հաղթահարումից է հիմնականում կախված հարցվողի հետ համագործակցության հաստատումը, ինչպես նաև հասարակության ընդհանուր վերաբերմունքը սոցիոլոգիական հետազոտությունների նկատմամբ:

*Երկրորդ*. հարցազրույցի վարումը, նույնիսկ ստանդարտացված հարցազրույցի դեպքում, լիովին մեքենայացված գործընթաց չէ: Իհարկե, հարցազրուցավարը պար-

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

տավոր է հարցերը տալ ճիշտ այնպես, ինչպես դրանք ձևակերպված են հարցաթերթում, հիշել բարդ սահմանումները և ճիշտ գրանցել պատասխանները: Երբ հարցազրուցավարը լավ ծանոթ չէ հարցաթերթիկին հետ, դա անխուսափելիորեն կազդի հարցազրույցի ընթացքի և ստացված ինֆորմացիայի որակի վրա: Շատ կարևոր է, որ հարցազրուցավարը կարդա հարցերը առանց սխալների, սահուն, որպեսզի հարցազրույցը նման լինի երկու հետաքրքրված անձանց զրույցի: Ավելին, հարցազրուցավարը պետք է քաջ ծանոթ լինի բոլոր հրահանգներին, որոնք ֆիքսված են հարցաթերթիկում: Նա պետք է նաև իմանա, որտեղ ավելացնել բացատրություններ, որտեղ ճշտումներ կատարել և ինչպես հաղթահարել անկանխատեսելի կամ բարդ իրավիճակները: Այս իմաստով հետազոտողը կախված է իր հարցազրուցավարներից՝ նրանց գիտելիքների, փորձի, բանիմացության և պատրաստվածության աստիճանից: Լավ հարցաթերթը օգնում է հարցազրուցավարին հաղթահարել անկանխատեսելի իրավիճակները, սակայն այն չի նվազեցնում հարցազրույցի ընթացքում հարցազրուցավարի դերի կարևորությունը: Այդուհանդերձ, մինչ հարցազրույցի անցկացման տեխնիկային անդրադառնալը, անհրաժեշտ է պատկերացում ստեղծել հարցաթերթի կառուցվածքի և հարցերի տեսակների մասին, որոնք կարող են ներգրավված լինել հարցաթերթում:

## 2. Հարցաթերթը և դրա դերը ստանդարտացված հարցազրույցում

***Հարցաթերթն*** իրենից ներկայացնում է հարցերի կառուցվածքային հավաքածու և հանդիսանում է հարցազրուցավարի հիմնական գործիքը՝ անհրաժեշտ տվյալների հավաքման ընթացքում: Հարցաթերթը սովորաբար պարունակում է նախաբան, որտեղ համառոտ բացատրվում են հետազոտության նպատակները և խնդիրները, և բաժանված է հարցերի բլոկների, որոնցից յուրաքանչյուրը բացահայտում է հետազոտության թեմայի այս կամ այն կողմը:

Հարցաթերթում ներգրավված հարցերը կարելի է դասակարգել՝ ելնելով տարբեր չափանիշներից:

Ըստ ***նպատակի*** կարող են լինել.

- ֆիլտր-հարցեր, որոնք ուղղված են բացահայտելու, արդյո՞ք հարցվողը պատկանում է մարդկանց այն խմբին, որոնց համար նախատեսված են հաջորդ հարցերը,
- ստուգիչ հարցեր, որոնք ուղղված են տվյալների հավաստիության բացահայտմանը,
- բովանդակային հարցեր, որոնք բացահայտում են հետազոտության հիմնական թեման:

Ըստ ***ձևի*** հարցերը բաժանվում են.

- փակ հարցերի, որոնցում հարցվողին առաջարկվում է պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակներ,
- կիսափակ հարցերի, որոնցում բացի նախօրոք մշակված պատասխանների տարբերակներից, հարցվողին հնարավորություն է ընձեռնվում արտահայտելու սեփական կարծիքը,

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



- բաց հարցերի, որոնց դեպքում հարցվողին չի առաջարկվում ոչ մի տարբերակ, և նա պետք է պատասխանի իր բառերով:

*Աղյուսակ 9* *Բաց և փակ հարցերի համեմատական վերլուծություն*

**Փակ հարցեր**

| Առավելություններ | Թերություններ |
|---|---|
| Հեշտ է հարցվողի համար: | Առաջարկում է մտքեր, որոնք հարցվողը այլ դեպքում կարող էր և չարտահայտել: |
| Ավելի հեշտ է համեմատել տարբեր հարցվողների պատասխանների արդյունքները: | Հարցվողները, որոնք չունեն կարծիք կամ գիտելիք կոնկրետ հարցի վերաբերյալ, նույնպես կարող են պատասխանել: |
| Պատասխանները հեշտ է կոդավորել և ենթարկել վիճակագրական վերլուծության: | Հարցվողները կարող են բացասական զգացումներ ունենալ, երբ նրանց ուզած պատասխանը ընգրկված չի նախատեսված տարբերակների մեջ: |
| Հարցի պատասխանները կարող են պարզաբանել դրա իմաստը հարցվողին: | Երբ պատասխանները բազմաթիվ են, ապա հարցվողը կարող է խճճվել: |
| Հարցվողները ավելի հեշտությամբ պատասխանում են զգայուն թեմաների վերաբերյալ հարցերին: | Հարցի ոչ ճիշտ մեկնաբանումը հարցվողի կողմից կարող է անհայտ մնալ հարցազրուցավարի համար: |
| Ընդհանուր առմամբ, հարցերի պատասխանները համապատասխանում են հետազոտության հիմնական թեմային, ոչ ադեկվատ պատասխանների թիվը հասցված է մինիմումի: | Հնարավոր են մեխանիկական սխալներ: |
| Ոչ լավ կրթված կամ իրենց կարծիքը լավ չարտահայտող հարցվողները չեն տուժում: | Հարցվողը ստիպված է բարդ հարցերին տալ պարզ պատասխաններ: |
| Կրկնությունը հնարավոր է: | Հարցվողը ստիպված է անել ընտրություն, որը իրական կյանքում նա չէր կատարի: |

**Բաց հարցեր**

| Առավելություններ | Թերություններ |
|---|---|
| Պատասխանների անսահմանափակ տարբերակների հնարավորություն է տալիս: | Տարբեր հարցվողներ հարցերին պատասխանում են մանրամասնության տարբեր աստիճաններով: |
| Հարցվողները հնարավորություն ունեն մանրամասն պատասխանել հարցերին և տալ պարզաբանումներ, որտեղ հարկավոր է: | Պատասխանները կարող են լինել շատ ընդհանուր, չվերաբերվեն հարցին: |
| Հնարավոր է ձեռք բերել չնախատեսված, բայց արժեքավոր ինֆորմացիա: | Համեմատությունը, կոդավորումը և վիճակագրական վերլուծությունը բարդ է: |
| Թույլ է տալիս ստեղծագործական մոտեցում, ինքնարտահայտում: | Լավ կրթված հարցվողները ստանում են արտոնություն: |
| Բացահայտում են հարցվողի տրամաբանությունը, մտածելու գործընթացը: | Հարցերը կարող են լինել չափազանց ընդհանուր, և հարցվողը կարող է կորցնել հարցազրույցի ուղղությունը: |
| | Պատասխանները գրանցվում են բառացիորեն, ինչը դժվարություններ է ստեղծում հարցազրուցավարի համար: |
| | Հարցին պատասխանելու համար հարցվողը ավելի շատ ժամանակի և ճիգերի կարիք ունի: |

Հարցի և նրա պատասխանի/ների ձևակերպումից մեծապես կախված է, թե ինչպիսի ինֆորմացիա կհավաքվի հարցման ընթացքում: Հարցերը պետք է ձևակերպվեն այնպես, որ հարցվողը.

1. ճիշտ հասկանա դրանք,
2. ընտրի համարժեք պատասխան,
3. կարողանա բառերով ճիշտ արտահայտել ընտրված պատասխանը:

Գոյություն ունեն որոշակի հանգամանքներ, որոնք կարող են ազդել հարցվողի պատասխանների վրա:

- Չի կարելի կիրառել բարդ և դժվար ձևակերպումներ, բոլոր բառերը պետք է հասկանալի լինեն անգամ ոչ այնքան կրթված հարցվողի համար: Ցանկալի չէ, որ օգտագործվեն հասկացություններ, մասնագիտական բառեր, իսկ եթե դրանք օգտագործվում են, ապա պետք է հստակ բացատրվեն, մեկնաբանվեն:
- Պետք է խուսափել երկիմաստությունից կամ հարցի ձևակերպման անորոշությունից: Օրինակ՝ «Որքա՞ն է Ձեր եկամուտը» հարցը առաջ է բերում մի շարք այլ հարցեր, ինչպիսիք են. ո՞ր եկամուտը - ամսեկան, տարեկան, հարկերի հետ, թե ոչ, միայն հարցվողի կամ ընտանիքի և այլն: Հարցի անորոշությունը բերում է ինֆորմացիայի աղավաղման, քանզի յուրաքանչյուր հարցվող իր իմաստն է ներդնում հարցի մեջ: Երկիմաստության մյուս աղբյուրն է «հաճախ», «սովորաբար» և այլ նույնատիպ բառերի օգտագործումը այն հարցերում, որտեղ հարցվողը պետք է տա «այո» կամ «ոչ» պատասխան: Օրինակ՝ տալով «Դուք սովորաբար գնո՞ւմ եք կինոթատրոն» հարցը կարող է բերել աղավաղված ինֆորմացիայի ստացմանը, որովհետև մի հարցվողի համար «սովորաբար» կինոթատրոն գնալը կարող է նշանակել շաբաթը մեկ անգամ, իսկ մյուսի համար – տարին 2-3 անգամ:
- Ամեն մի լեզվում կան էմոցիոնալ երանգավորում ունեցող բառեր, որոնք կապված են հասարակական նորմերի, արժեքների, հիմնադրույթների հետ: Դրանց կիրառումը հուշում է հարցվողին, և շատ հաճախ ենթադրում է պատասխաններ, որոնք որոշ դեպքերում չեն համապատասխանում իրականությանը:
- Հարցում չպետք է արտահայտվի հետազոտողի կարծիքը, արժեքները, քանի որ կարող են առաջացնել պատասխանների խեղաթյուրում:
- Պետք է խուսափել հարցը սկսել ենթադրությունից, որի հետ հարցվողը կարող է և համամիտ չլինել: Օրինակ՝ «Այսօր քաղաքում գործում են չափազանց շատ երթուղային տաքսիներ, և դա բացասաբար ազդում քաղաքի մթնոլորտի վրա: Դուք կցանկանա՞ք, որ երթուղային տաքսիների թիվը կրճատվի»: Տվյալ դեպքում ենթադրվում է, որ բոլոր հարցվողները ի սկզբանե համաձայն են, որ երթուղային տաքսիները շատ են և դա վնաս է բերում քաղաքի մթնոլորտին, ինչը ոչ միշտ է ճիշտ:
- Հարցը չպետք է կրի երկակի ծանրաբեռնվածություն, սա այն դեպքն է, երբ մեկ հարցում ըստ էության կա երկու հարց: Օրինակ՝ «Արդյո՞ք Ձեր գործատուն ապահովում է [illegible] թե այն

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



ենթադրում է միայն «այո» կամ «ոչ» պատասխանները, կարող է խճճել հարցվողին, եթե նրա գործատուն ապահովում է նրան, օրինակ, միայն թոշակով:

Ընդհանուր առմամբ, հարցաթերթ, ինչպես նաև սոցիալական հետազոտության ցանկացած այլ գործիք մշակելիս, անհրաժեշտ է, որ այն.

- հարցվողների մոտ շահագրգռվածություն առաջացնի հենց առաջին հարցերից,
- պահպանի այդ շահագրգռվածությունը կոնտակտային հարցերի միջոցով ողջ հետազոտության ընթացքում,
- պահպանի հարցի ձևակերպման ու դրա պատասխանների համապատասխանությունը,
- հարցերում չպարունակի էմոցիոնալ երանգավորում ունեցող բառեր,
- հարցերի հերթականությունը չազդի պատասխանների վրա:

### *2.1 Հարցազրուցավարի դերը*

Հարցաթերթիկը կարող է լրացվել հարցազրուցավարի օգնությամբ /այս դեպքում մենք խոսում ենք ստանդարտացված հարցազրույցի մասին/, կամ հարցվողի կողմից ինքնուրույն և հետո հավաքվի կամ փոստով ուղարկվի հետազոտական խմբին /այս դեպքում մենք խոսում ենք անկետավորման մասին/:

Ընդհանուր առմամբ, կարելի է թվարկել մի քանի պատճառներ, որոնք կխոսեն հարցազրուցավարի օգնությամբ լրացված հարցաթերթիկի առավելությունների մասին:

Նախ և առաջ, վերադարձված հարցաթերթիկների թիվը անհամեմատ ավելի մեծ է հարցազրույցի դեպքում, քան, օրինակ, փոստային հարցման ժամանակ. ավելի հեշտ է դեն նետել հարցաթերթիկը, քան բացատրել հարցզրուցավարին, որ չես ուզում մասնակցել հարցմանը:

Հարցազրուցավարի ներկայությունը նաև կրճատում է «չգիտեմ», «դժվարանում եմ պատասխանել» պատասխանների թիվը, որովհետև հարցազրուցավարը միշտ կարող է օգտագործել ճշգրտման տեխնիկան /որը մանրամասն կներկայացվի ավելի ուշ/: Իր հերթին այդ տիպի պատասխանների կրճատումը որոշիչ է հետազոտության համար՝ հավաստի և ամբողջական ինֆորմացիա ստանալու տեսակետից:

Հարցազրուցավարը որոշ չափով հանդես է գալիս որպես ապահովագիր, որ հարցաթերթի այս կամ այն կետերը ճիշտ կընկալվեն հարցվողի կողմից: Եթե վերջինս չի հասկացել կամ սխալ է հասկացել հարցի իմաստը, հարցազրուցավարը կարող է օգնել նրան պարզաբանել անհասկանալի մասերը:

Եվ, վերջապես, բացի հարցազրույց անցկացնելուց, հարցազրուցավարը կարող է դիտարկումներ կատարել հարցվողի վարքի, ռեակցիաների, տան, ունեցվածքի վերաբերյալ, ինչը արժեքավոր լրացուցիչ ինֆորմացիա կարող ապահովել հետազոտության համար:

# 3. Հարցազրույցի սկիզբը

Հարցման նախապատրաստման առաջին 2 փուլերը՝ հարցաթերթի մշակում և հարցազրուցավարների հրահանգավորում, սովորաբար իրականացվում են հետազոտող խմբի կողմից, որի ընթացքում հարցազրուցավարը ծանոթանում է հետազոտության նպատակների և մեթոդների, հարցաթերթին, հարցվողների ընտրության տեխնիկայի և այլնի հետ:

Հարցազրուցավարի հաջորդ խնդիրը հարցվողին գտնելը և նրա հետ հարցազրույց անցկացնելն է: Որոշ դեպքերում մարդը, որի հետ հարցազրուցավարը առաջինն է կապ հաստատում, հենց հարցվողը կլինի: Սակայն այն դեպքում, երբ հարցվողը տանը չէ, նրա հետագա մասնակցությունը կարող է մեծ չափով կախված լինել այն բանից, թե ինչ նրան կհաղորդի այն մարդը, որի հետ հարցազրուցավարը հանդիպել է սկզբում: Այսպիսով. կապի հաստատման ընդհանուր կանոնները կարող են կիրառվել անկախ այն բանից, թե ո՞ւմ հետ է հանդիպել հարցազրուցավարը առաջին անգամ՝ հարցվողի, թե նրա ընտանիքի անդամի, հարազատի, ընկերոջ և այլնի հետ:

### *3.1 Ներկայացում*

Չնայած վերջին տարիների ընթացքում Հայաստանում սոցիոլոգիական հարցումները բավական լայն տարածում են գտել, շատերի համար այդուհանդերձ հարցազրուցավարի հետ հանդիպումը նոր փորձ է: Ուստի նրանց առաջին տպավորությունը հարցազրուցավարի մասին, որը սովորաբար հիմնվում է արտաքին տեսքի և շարժուձևի վրա, շատ կարևոր է: Այն, թե ինչպես է մարդը հագնված, կամ ինչպես է իրեն պահում, վկայում է նրա վերաբերմունքը այս կամ այն անձի հանդեպ:

Հարցազրուցավարի վարքը պետք է մարդկանց անմիջականություն հաղորդի, բայց միևնույն ժամանակ արտահայտի վստահություն և պատասխանատվություն: Եթե թվա, որ հարցազրուցավարը տատանվում է, թե ինչպես անցկացնի հարցազրույցը, պոտենցիալ հարցվողը կարող է նույնպես տատանվել՝ տա՞ արդյոք հարցազրույց, թե՝ ոչ:

Լավագույն դեպքում հարցազրուցավարը պետք է լինի ***չեզոք*** արտաքինով, հագուստի ոճով, շարժուձևով և այլն: Եթե հարցվողը զգա իր և հարցազրուցավարի մեջ որոշակի սոցիալական տարածություն, նա կարող է հրաժարվել համագործակցելուց կամ հարցազրույցի ընթացքում ճշմարիտ պատասխան տալուց՝ դրանով աղավաղելով արդյունքները:

Սկզբում հարցազրուցավարը պետք է բացատրի, թե ի՞նքն ով է, ինչո՞ւ է նա այստեղ, պետք է տա այն կազմակերպության անունը, որն անց է կացնում հետազոտությունը: Ցանկալի է, որ նա ներկայանա իր բառերով՝ սակայն բաց չթողնելով ներկայանալու գլխավոր կետերը: Ստանդարտ ներկայանալու ձևը հաճախ հնչում է ինչպես անգիր արտասանություն և թողնում է ձևական տպավորություն: Անձը հաստատող փաստաթուղթը, ցանկալի է լուսանկարով, կարող է շատ օգտակար լինել տվյալ դեպքում:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



### *3.2 Կապի հաստատում*

Հաճախ հետազոտություններում առաջին հաղորդակցումը հարցազրուցավարի կողմից օգտագործվում է պոտենցիալ հարցվողին ընտրելիս: Հարցվողների ընտրության տեխնիկան կարող է պահանջել հարցազրուցավարից, որ նա խնդրի թվարկել հետազոտության չափանիշներին համապատասխանող տնային տնտեսության բոլոր անդամներին (օրինակ, ըստ տարիքի 18-ից և բարձր): Կամ պոտենցիալ հարցվողը պետք է ընտրվի նախօրոք որոշված կանոնների հիման վրա. օրինակ, նա կարող է տնային տնտեսության որոշակի դերի կատարողը լինել, եթե հարցազրուցավարը պետք է հարցումն անցկացնի տնային տնտեսության գլխավորի հետ:

Մարդը, որին առաջինն է հանդիպել հարցազրուցավարը, կարող է հրաժարվել հարցազրույցից հարցվողի անունից, նպատակ ունենալով, օրինակ, պաշտպանել հաշմանդամին, ընտանիքի ծեր անդամներին և այլն: Երբեմն այսպիսի վարքը արդարացված է, սակայն մարդիկ երբեմն չափազանց կասկածամիտ են և պաշտպանում են մարդկանց, որոնցից շատերը հաճույքով կպատասխանեին հետազոտության հարցերին: *Տվյալ դեպքում անհրաժեշտ է կապ հաստատել հենց հարցվողի հետ և հնարավորություն տալ, որ ինքը ընտրությունը կատարի:*

Ինչպես նշվեց վերը, հարցազրուցավարի գլխավոր խնդիրը պոտենցիալ հարցվողի հետ կապ հաստատելն է: Գործնականում մեծամասնությունը պատրաստ է համագործակցության, միայն մի փոքր մասն է, որ միշտ հրաժարվում է:

Այլ բան է, որ մարդկանց բավականին զգալի մասը որոշում է համագործակցել, թե ոչ, ելնելով այն հանգամանքից, թե ինչպե՞ս են իրեն դիմել: Առավել տարածված անհանգստություն հարուցող խնդիրներից մեկը այն է, թե որքանո՞վ է ճշմարտացի հարցազրույցը: Անձը հաստատող փաստաթուղթը կարող է տրվել կազմակերպության կողմից, որի մասին պոտենցիալ հարցվողը կարող է ոչինչ չգիտենա: Ուստի հարցազրուցավարները պետք է միշտ պատրաստ լինեն հետազոտությունն անցկացնող կազմակերպության մասին անհրաժեշտ ինֆորմացիա տրամադրել:

Գոյություն ունեն նաև մարդկանց անվստահության այլ պատճառներ: Հարցվողները կարող են երաշխիք պահանջել (և արդարացված) որոշ կետերի համար, մինչ հարցմանը մասնակցելը: Այսպես, օրինակ, որոշ հարցվողներ իրենց հետ հարցում անցկացնելու խնդրանքը կարող են իրենց անձնական կյանքին միջամտելու փորձ համարել: Այդ դեպքում հարցազրուցավարը պետք է բացատրի հետազոտության նպատակը, վստահեցնի հարցվողին, որ նրա պատասխանները գաղտնի են և երբեք չեն կապվի կոնկրետ հարցվողի հետ: Այս իրավիճակը կարող է կարգավորվել նաև բացատրական նամակի օգնությամբ, որը նպատակահարմար է թողնել հարցվողի մոտ՝ բանավոր բացատրության տպավորության ազդեցությունը ուժեղացնելու նպատակով:

Պոտենցիալ հարցվողը կարող է հարցազրուցավարից բացատրություն պահանջել ընտրանքի սկզբունքների վերաբերյալ. ինչպե՞ս են նրան ընտրել հարցազրույցի համար, ինչո՞ւ է անհնար փոխարինումը, հրաժարման դեպքում ինչպիսի՞ շեղումներ կարող են առաջանալ և այլն: Այդ դեպքում հարցազրու-

ցավարը պետք է սահմանափակվի ընտրանքի աղբյուրի օրինակ՝ ընտրական ցուցակները) և հարցվողների ընտրության տեխնիկայի (օրինակ՝ պատահական ընտրություն) համառոտ նկարագրությամբ:

Հարցվողները կարող են հետաքրքրվել նաև հետազոտության նպատակով: Հարցազրուցավարը պետք է կարողանա բացատրել այն, խուսափելով այնպիսի ձևակերպումներից ու արտահայտություններից, որոնք կարող են ազդել հարցվողի պատասխանների վրա: Մյուս կողմից, եթե երևա հարցազրուցավարի անտարբերությունն ու չհետաքրքրվածությունը հետազոտության նպատակներով, ապա հարցվողի մոտ կարող է բացասական տրամադրություն ստեղծվել հետազոտության վերաբերյալ:

Հարցազրույցի ընթացքում հարցվողը կարող է հարցնել, թե ինչո՞ւ է այս կամ այն հարցը տեղ գտել հարցաթերթում: Համապատասխանաբար հարցազրուցավարը պետք է բավական ծանոթ լինի հետազոտության նպատակների հետ, որպեսզի բավարարող պատասխան տա:

### *3.3 Հարցազրույցի անցկացման վայրը*

Կարևոր է, որ հարցազրուցավարը ձեռքի տակ ունենա կանոնավոր կերպով դասավորված բոլոր անհրաժեշտ նյութերը, որպեսզի անհրաժեշտության դեպքում արագ գտնի պետք եղած փաստաթուղթը: Հարցազրուցավարը պետք է փորձի նստել հարցվողին դեմ հանդիման, բայց այնպիսի հեռավորության վրա, որպեսզի նա չփորձի կարդալ հարցաթերթի հարցերը՝ դրանք լսելու փոխարեն: Հարցազրուցավարը պետք է վստահ լինի, որ հարցվողն իրեն հարմար է զգում, նրա ակնոցները ձեռքի տակ են, լուսավորվածությունը բավարար է, որպեսզի հարցվողը կարդա քարտերը, նրանք երկուսն էլ միացված հեռուստացույցից կամ ռադիոընդունիչից բավական հեռու են նստած, որպեսզի մեկը մյուսին լսեն առանց լարվելու և շեղվելու:

Սենյակում երրորդ անձի ներկայությունը ցանկալի չէ, բայց միշտ չէ հնարավոր դրանից խուսափել: Այդ դեպքում հարցազրուցավարը կարող է առաջարկել անցնել սենյակի մյուս անկյունը, որպեսզի զրուցելն ավելի հարմար լինի: Ներկաները, որոնք փորձում են միջամտել հարցազրույցին և արտահայտել իրենց սեփական կարծիքը, պետք է քաղաքավարությամբ, բայց հաստատորեն հեռացվեն: Հաճախ դա կարելի է անել, խոստանալով, որ նրանց կարծիքը կլսվի հարցազրույցից հետո, և կրկին կենտրոնանալով հարցվողի վրա, ուշադրություն չդարձնել այդ մարդուն: Եթե դա չօգնի, հարցազրուցավարը պետք է բացատրի, թե ինչու է կարևոր հարցազրույցն անցկացնել առանձին, քանի որ միայն ընտրված հարցվողների կարծիքն ու դույքները կարող են հաշվի առնվեն:

## 4. Հարցազրույցի ժամանակ առկա դերերը

Հարցազրուցավարները վարժվում են հարցազրույցի ժամանակ իրենց դերին: Հարցվողները՝ ոչ: Նրանք աջակցության կարիք ունեն, իրենց անծանոթ խնդիրը կատարելիս:

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



Հարցվողը պետք է գիտակցի, որ հարցազրույցը ո՛չ բանավոր քննություն է և ո՛չ էլ սովորական զրույց: Եթե նրա մոտ քննության տրամադրություն ստեղծվի, ապա նա կսկսի անհանգստանալ, արդյո՞ք «սխալ» չի պատասխանում, կամ էլ ինքն արդյո՞ք բավարար իրազեկ է՝ պատասխանելու որոշակի հարցերի: Իսկ եթե հարցվողը կարծի, որ հարցազրույցը ընկերական զրույց է, ապա նա կարող է շեղվել հարցաթերթի թեմայից, կամ փորձել պատասխանել ոչ ճիշտ հարցերի:

Հարցազրուցավարները պետք է չմիջամտող վարք դրսևորեն, բայց համոզված լինեն, որ հարցազրույցն ընթանում է ոչ լարված և ոչ էլ ընկերական մթնոլորտում: Ցանկալի է, որ հարցազրուցավարը հաճախ նայի հարցվողին, հատկապես հարցը տալուց անմիջապես հետո, որպեսզի անմիջապես նկատի անհանգստության և շփոթվածության նշույլները, և պարզ քայլեր ձեռք առնի՝ ոչ պաշտոնական մթնոլորտ հաստատելու համար: Տեսողական կոնտակտի պակասը հարցվողի հետ կարող է անհետաքրքրության և անկարևորության տրամադրություն ստեղծել, մինչդեռ չափազանց մեծ ուշադրությունը կարող է գրգռել հարցվողին:

### *4.1 Կառուցողական դեր խաղալով*

Հարցվողի հետաքրքրությունը և բարի կամքը պետք է պահպանվի ամբողջ հարցազրույցի ընթացքում: Հարցազրուցավարը, օրինակ, պետք է վստահ լինի, որ հարցազրույցի ***տեմպը*** համապատասխանում է հարցվողի տեմպին: Որոշ մարդիկ արագ են պատասխանում և ցանկանում են հնարավորինս արագ ավարտել հարցազրույցը: Մյուսներին ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի մտածեն. վերջ ի վերջո, հարցն առաջին անգամ լսելով, նրանք կարող են մտածել այնպիսի բաների շուրջ, որոնց մասին երբեք չեն մտածել:

Եթե ներկայանալու և կապ հաստատելու փուլում հարցազրուցավարները խրախուսվում են սեփական ձևակերպումներն օգտագործել, ապա *հարցերը տալիս, նրանք պետք է խստորեն հետևեն հարցաթերթի ձևակերպմանը:* Անգամ բառերի աննշան թվացող փոփոխությունները կարող են ազդել հարցվողի ընկալման վրա և ազդել նրա պատասխանների վրա:

Եթե թվում է, թե հարցվողը չի հասկացել, կամ սխալ է հասկացել հարցը, հարցազրուցավարը պետք է ևս մեկ անգամ ընթերցի այն, բայց ավելի դանդաղ: Հարցազրուցավարը չպետք է փորձի բացատրել հարցը իր բառերով, քանի որ, ինչպես արդեն նշվեց, դա կարող է ազդել հարցվողի պատասխանի վրա: Եթե հարցվողը հարցնում է հարցազրուցավարին, թե ինչ է նշանակում տվյալ հարցը, ապա հարցազրուցավարը նախ պետք է պարզի, թե ինչպես է հարցվողն այն հասկանում: Եթե հարցվողը ճիշտ է, ապա հարցազրուցավարը պետք է ասի այդ մասին: Իսկ եթե հարցվողը ճիշտ չէ, նրան պետք է օգնել հասկանալ հարցի նախնական իմաստը՝ չփոխելով դրա ձևակերպումը:

Հարցազրուցավարը պետք է ավելացնի հարցազրույցի ոչ պաշտոնականությունը՝ ավելացնելով կապակցող արտահայտություններ և բառեր: Սակայն շատ կարևոր է, որ այդ արտահայտություններն ու բառերը չազդեն հարցաթերթի հարցերի բովանդակության վրա և դրանով չկարողանան աղավաղել արդյունքները:

### *4.2 Խուսափել խեղումներից*

Հարցվողների պատասխանները կարող են խեղվել տարբեր պատճառներով.
- հիշողության թերության,
- կարևոր թեմաների պատճառով հուզվելու,
- չափազանցնելու միտումից, երբ խոսքը գնում է ինքնագնահատականի մասին,
- ուղղակի պատասխանից խուսափելու դեպքում, երբ խոսքը գնում է ինքնաքննադատության մասին և այլն:

Այս խնդիրը պետք է լուծվի հարցաթերթի մշակման և պիտանելիության ստուգման փուլում: Հարցազրուցավարներն ի վիճակի չեն ամբողջովին բացառել այս կարգի աղավաղումները:

Սակայն հարցվողների պատասխանները կարող են աղավաղվել հարցազրուցավարի անհատական բնութագրությունների պատճառով, կամ էլ դրանից, թե ինչպես են նրանք վարում հարցազրույցը: Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, թե ինչպես տարբեր հարցազրուցավարներ միևնույն հարցերին ստացել են միանգամայն տարբեր պատասխաններ՝ պատահաբար ընտրված հարցվողների նույն խմբում:

Սովորական զրույցում մարդիկ հաճախ աղավաղում են այն, ինչ ասում են իրենց զրուցակցին՝ ելնելով դրանից, թե իրենք ինչ են մտածում իրենց զրուցակիցը սպասում կամ ցանկանում է լսել: Այդպիսի ռազմավարությունը նպատակ է հետապնդում մեղմացնել սոցիալական հարաբերությունները, սակայն այն մեծ վտանգ է ներկայացնում հարցազրույցի համար: Մինչդեռ հարցազրուցավարը անմիջական, ոչ ֆորմալ հարաբերություններ է հաստատում հարցվողի հետ, նա պետք է խուսափի սեփական կարծիքը, հայացքները կամ միտումները արտահայտելուց՝ առնվազն մինչև հարցազրույցի ավարտը:

Հարցազրույցի ընթացքում հարցվողը հաճախ փորձում է իմանալ հարցազրուցավարի կարծիքը: Դա միանգամայն անթույլատրելի է, ուստի հարցազրուցավարները պետք է փորձեն գտնել այդպիսի իրավիճակներից խուսափելու ուղիներ և խրախուսեն հարցվողին ինքնուրույն խոսքը, և ոչ թե հարցեր տալ:

Հարցազրուցավարները հարցաթերթի հարցերը պետք է տան հանդարտ, չեզոք կերպով՝ նույն ձևով ընդունելով պատասխանները: Զարմանքի կամ անվստահության թեթև արտահայտությունը, կամ էլ չափազանց դրական արձագանքը հարցվողի պատասխանին, կարող են ազդել հարցվողի հետագա պատասխանների վրա: Մշտապես բարեհամբույր, հավասարակշռված վերաբերմունքը կարող է նպաստել, որ հարցվողը ջանքեր գործադրի: Սակայն, ինչպես նշվել է վերը, աննշան արձագանքը կարող է ազդել հարցվողի վրա: Այսպես, օրինակ, հարցվողի պատասխանին «այսպես, լավ է» արձագանքը կարող է ազդել հետագա պատասխանների վրա:

Հաճախ են հարցազրուցավարները բախվում հարցողի պատասխանների ակնհայտ անհամապատասխանության դեպքերի հետ: Դա կարող է պատահել այն դեպքում, երբ.



- հարցվողը ճիշտ չի հասկացել հարցը,
- հարցազրուցավարը ճիշտ չի հասկացել պատասխանը, կամ էլ
- հարցվողը ճշգրիտ չի ձևակերպել մտքերը և այլն:

Եթե հարցազրուցավարը նկատել է հարցվողի պատասխաններում ակնհայտ անհամապատասխանություն որևէ որոշակի թեմայի շուրջ, ապա նա պետք է նրբանկատորեն հարցվողի ուշադրությունը հրավիրի այդ անհամապատասխանության վրա: Իսկ եթե անհամապատասխանությունը հարցվողի կարծիքի արտահայտությունն է, ապա այն պետք է պահպանվի:

### *4.3 Ճշգրտում*

Հարցում անցկացնելու կարևոր հմտություններից է ***ճշգրտումը***, այսինքն հարցվողին խրախուսելը, որ պատասխանի, կամ էլ արդեն տված պատասխանը պարզաբանի ու լրացնի:

Ճշգրտումը կարող է լինել *վերբալ* և *ոչ վերբալ*: Օրինակ, հարցվողին սպասողական հայացքով նայելը, կամ «ըմմմ ..» արտահայտությունը ևս հանդիսանում են ճշգրտումներ: Ճշգրտումներ են նաև «Խնդրում եմ, պատմեք ավելի մանրամասն», կամ «Իսկ էլ ի՞նչ պատճառներ կան» հարցերը և այլն: Ճշրտումը միշտ պետք է ***չեզոք*** լինի, ի տարբերություն հարցերի ձևակերպումներում ընդգրկված դրդումներից, որոնք կոչված են խրախուսել հարցվողին պատասխանել: Սակայն բոլոր դրդումները նախօրոք մշակվում ու ընդգրկվում են հարցաթերթում, և հարցազրուցավարը երբեք չպետք է կիրառի դրդում իր սեփական նախաձեռնությամբ:

Ճշգրտման մի քանի տիպեր կարող են օգտակար լինել փակ հարցերի դեպքում: Ենթադրենք հարցազրուցավարը հարցնում է. «Որքանո՞վ եք բավարարված Ձեր տնով: Դուք կասեք, որ միանգամայն բավարարված եք, ավելի շուտ բավարարված եք, ավելի շուտ բավարարված չեք, կամ բոլորովին բավարարված չեք»: Պատասխանը կարող է լինել. « Չեմ կարող ստույգ ասել»: Նման պատասխանը ավելի շուտ նշանակում է, որ հարցվողը ոչ թե որևիցե կարծիք չունի, այլ տատանվում է կատեգորիաների ընտրության հարցում: Նման դեպքերում հարցազրուցավարը կարող է ճշգրտել հետևյալ արտահայտության օգնությամբ. «Ո՞րն է առավել համապատասխանում Ձեր հայացքներին» և կրկնել հարցը: Եթե պատասխանը կրկին չի համապատասխանում առաջարկված կատեգորիաներին օրինակ. «Ես կարծում եմ իմ տունը կարգին վիճակում է», հարցազրուցավարը պետք է ևս մեկ անգամ կրկնել հարցաթերթում նշված կատեգորիաները. «Դուք կասեիք, որ միանգամայն բավարարված եք, ավելի շուտ բավարարված եք և այլն»:

Ճշգրտումը հատկապես կարևոր է բաց հարցերի ժամանակ, երբ հարցվողը պետք է արտահայտի իր կարծիքը սեփական բառերով, և հարցազրուցավարը պետք է գրանցի դրանք բառացիորեն: Որպեսզի հարցվողը մանրամասնի իր պատասխանը, հարցազրուցավարը կարող է կիրառել ստորև նշված ճշգրտման տեխնիկաներից ցանկացածը.
- սպասողական հայացք,
- «ըմմ», «այո» և սպասողական լռություն,

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

- «Ուրիշ էլ ի՞նչ կարող եք ավելացնել»,
- «Որևիցե այլ պատասխան»,
- «Խնդրում եմ, ավելի մանրամասն պատմեք այդ մասին»,
- «Ինձ հետաքրքրում են Ձեր բոլոր պատասխանները»:

Հարցվողներին իրենց պատասխաններում հաճախ օգտագործում են այնպիսի երկիմաստ բառեր ինչպիսին է, օրինակ, «կարևոր» բառը, կամ էլ բերում են ոչ հստակ պատասխաններ, օրինակ, «Դա իմ առողջության /տարիքի/ վիճակի պատճառով է» և այլն: Հարցազրուցավարը պետք է ճշգրտի նման ձևակերպումները հետևյալ արտահայտությունների օգնությամբ.

- «Ինչո՞ւ եք կարծում, որ դա կարևոր է»
- «Ի՞նչ նկատի ունեք ասելով, որ դա Ձեր առողջության պատճառով է»
- «Ես այնքան էլ հստակ չեմ հասկանում, թե ինչ նկատի ունեք ասելով «կարևոր»
- « Ինչպե՞ս է այն անդրադառնում Ձեր առողջության վրա»

Որտեղ էլ, որ կիրառվեն ճշգրտումները, հարցազրուցավարի խնդիրը պարզ է ստանալ բոլոր համապատասխան պատասխանները, համոզված լինել, որ ամաչկոտ հարցվողները հնարավորություն են ունեցել արտահայտել իրենց կարծիքը, իրենք եղել են չեզոք, հետաքրքրված և համոզիչ:

Ճշգրտումն իրենից ներկայացնում է հարցազրույցի այն ասպեկտը, որը մեծ հմտություն է պահանջում: Եթե այն ճիշտ չի իրականացվել, այն կբերի ինֆորմացիայի կորստի կամ աղավաղված ինֆորմացիայի ստացմանը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Babbie E. The Practice of Social Research. 8th edition Wadsworth Publishing Company. 1998
2. Honville G., Jowell R. and Associates. Survey Research Practice. London. 1997
3. Lawrence W. Newman, Social Research Practice, 3rd edition, 1997
4. В. А. Ядов. Стратегия социологического исследования. Москва 1998
5. Рабочая книга социолога. "Наука". М., 1977

# ԸՆՏՐԱՆՔԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## Հիմնական գաղափարների սահմանումները

Այն սոցիալական օբյեկտների ամբողջությունը, որը ուսումնասիրության է ենթակա սոցիոլոգիական հետազոտության ծրագրի սահմաններում կոչվում է գլխավոր համախմբություն

***Յուրաքանչյուր գլխավոր համախմբություն սահմանելիս՝ անհրաժեշտ է հստակ սահմանել նաև գլխավոր համախմբության տարածքային և ժամանակային սահմանները:***

Գլխավոր համախմբությանը պատկանող այն սոցիալական օբյեկտների բազմությունը, որոնք անմիջական ուսումնասիրության են ենթակա և տեղեկատվության աղբյուր են հանդիսանում կոչվում է **ընտրանքային համախմբություն:**

Ընտրանքային համախմբության ստացման գործընթացը կոչվում է **ընտրանք:**

Ընտրանքային համախմբության այն տարրերը, որոնք տեղեկատվության աղբյուր են հանդիսանում կոչվում են **դիտարկման միավորներ:**

Ընտրանքային համախմբության հետ կապված օբյեկտները, որոնք հանդիսանում են ընտրության տարրեր ընտրանքի ձևավորման այս կամ այն փուլում կոչվում են **ընտրության միավորներ:**

***Դիտարկման միավորները համընկնում են ընտրության միավորների հետ միայն ընտրանքի պարզ ձևերի կիրառման ժամանակ: Ընտրանքների բարդ համակցված ձևերի կիրառման ժամանակ ընտրության և դիտարկման միավորները որպես կանոն չեն համընկնում:***

Ընտրանքային համախմբության հատկությունը ընդօրինակել գլխավոր համախմբության բնութագրիչները կոչվում է ընտրանքային համախմբության **ներկայացուցչականություն (representativeness):**

Գլխավոր (ընտրանքային) համախմբության նախօրոք ամրագրված բնութագրիչների բաշխումների համակարգը մենք հետագայում կանվանենք գլխավոր (ընտրանքային) համախմբության կառուցվածք

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.

Ընտրանքը կոչվում է **ներկայացուցչական,** եթե ընտրանքային համախմբության կառուցվածքի տարբերությունը գլխավոր համախմբության կառուցվածքից չի գերազանցում նախօրոք ամրագրված չափը:

Ընտրանքային համախմբության կառուցվածքի շեղման չափը գլխավոր համախմբության կառուցվածքից կոչվում է **ընտրանքի սխալ:**

Եթե ընտրանքային համախմբության կառուցվածքը չի համապատասխանում գլխավոր համախմբության կառուցվածքին ընտրանքի սխալի ճշտությամբ, ապա ընտրանքը կոչվում է **շեղված:**

**Օ ր ի ն ա կ՝** *շեղված ընտրանքի հանրահայտ օրինակն է հանդիսանում 1936թ ԱՄՆ-ում ընտրությունների նախօրեին «Literature Digest» ամսագրի կողմից անցկացրած հետազոտության համար իրականացված ընտրանքը (ամսագիրը կանխագուշակել էր Լենդոնի հաղթանակը նախագահական ընտրությունների արդյունքում):*

*Ընտրանքի սխալները կարող են լինել* **դ ա տ ա հ ա կ ա ն** *և* **ս ի ս տ ե մ ա տ ի կ** *բնույթի:*

**Ընտրանքի ծավալը** սահմանվում է որպես ընտրանքային համախմբության մեջ ընդգրկված դիտարկման միավորների քանակը:

*Ընտրանքի ծավալը հակադարձ համեմատական է գլխավոր համախմբության համասեռության աստիճանին ըստ ամրագրված բնութագրիչների ընտրանքի սխալի մեծությանը: Ընտրանքի ծավալը ուղիղ համեմատական է գլխավոր համախմբության ծավալին ուսումնասիրվող բնութագրիչների քանակին և հետազոտության կազմակերպման հնարավորություններին:*

Այն ընտրանքները, որոնց ընտրության միավորները ընտրվում են «առաջին հանդիպողի» սկզբունքով կոչվում են **տարերային ընտրանքներ**

**Օ ր ի ն ա կ՝** *Տարերային ընտրանքների օրինակներն են՝ հեռուստատեսային փոխագրող հարցումները, փողոցում պատահական անցորդների հարցումները, հարցումներ թերթերի կամ ամսագրերի միջոցով և այլն*

Այն ընտրանքները, որոնց ընտրության միավորները ընտրվում են հարցազրույցավարների կողմից համապատասխան նախօրոք ամրագրված քվոտաների (հաճախականությունների) կոչվում են **քվոտային ընտրանքներ:**

*Տարերային և քվոտային ընտրանքները պատկանում են տեսական հիմք չունեցող ընտրանքների դասին: Այդ ընտրանքների ներկայացուցչականությունը ընդհանուր առմամբ ստուգել հնարավոր չէ:*

An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.



Այն ընտրանքները, որոնք հիմնված են միավորների պատահական ընտրության վրա հավասար հնարավորություն են ապահովում գլխավոր համախմբության բոլոր տարրերի ընտրված լինել կոչվում են **հավանականային ընտրանքներ:**

*Հավանականային ընտրանքների իրականացման համար անհրաժեշտ է* **ընտրանքի հիմք:**

Գլխավոր համախմբության միավորների ցանկը որը բավարարում է լրիվության, ճշգրտության, միանշանակության, միարժեքության և ադեկվատության պահանջներին կոչվում է **ընտրանքի հիմք:**

**Օ ր ի ն ա կ՝** *Որպես առանձնահատուկ ընտրանքի հիմք կարող է հանդիսանալ սոցիալական քարտեզը:*

Հավանականային ընտրանքները ըստ իրականացման միջոցների կարելի է դասակարգել որպես **պարզ հավանականային** և **համակարգայնացված հավանականային ընտրանք:**

*Պարզ հավանականային ընտրանքները իրականացվում են վիճակահանության կամ պատահական թվերի միջոցով:*

*Համակարգայնացված հավանականային ընտրանքները իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվարկել ընտրության* **քայլը:**

Համակարգայնացված հավանականային ընտրանքների համար **K ընտրության քայլը** հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով
որտեղ **N-ը՝** գլխավոր համախմբության ծավալն է

$$K = \left[ \frac{N}{n} \right],$$

**n-ը** ընտրանքի ծավալն է
**[A] – A** թվի ամբողջ մասն է

*Առաջին ընտրության միավորը ընտրվում է պատահական կերպով ընտրանքի հիմքից առաջին* **K + s** *միավորներից որտեղ* **S–ը՝** *մնացորդն է գլխավոր համախմբության ծավալը ընտրանքի ծավալի վրա բաժանելու արդյունքում: Հա-*

*ջորդ ընտրության միավորի համարը ստացվում է նախորդ միավորի համարին գումարելով* **K** *քայլը: Ընտրանքային այս գործընթացը շարունակվում է մինչև համապատասխան ծավալով ընտրանքային համախմբության կառուցումը:*

*Համակարգայնացված ընտրանքի հիմքի կառուցման համար անհրաժեշտ պայմանն է համակարգվածության պարբերականության բացակայությունը*

Այն հավանականային ընտրանքները, որոնց ընտրության միավորներն են գլխավոր համախմբության միավորների ենթահամախմբությունները և այդ համախմբությունները կազմող միավորները ամբողջովին ընդգրկված են ընտրանքային համախմբության մեջ որպես դիտարկման միավորներ՝ կոչվում են սերիական ընտրանքներ:

Սերիական ընտրանքի ընտրության միավորները կոչվում են **սերիաներ**

**Օ ր ի ն ա կ՝** *բյուջետային հետազոտություններում որպես կանոն կիրառվում են սերիական ընտրանքներ, որտեղ սերիաները ընտանիքներն են*

Գլխավոր համախմբության տրոհումը այնպիսի խմբերի, որոնք համասեռ են ըստ հետազոտվող հատկանիշների (այսինքն՝ խմբերի ներսում հատկանիշների ցրվածքը ավելի նվազ է, քան ցրվածքը խմբերի միջև) կոչվում է գլխավոր համախմբության **շերտավորում:**

Վերը նշված խմբերը կոչվում են **շերտեր:**

Այն ընտրանքները, որոնց ձևավորման փուլերից մեկը գլխավոր համախմբության շերտավորումն է կոչվում են **շերտավորված ընտրանքներ**

Այն ընտրանքները, որոնք իրականացվում են մի քանի փուլերով և յուրաքանչյուր փուլում ընտրանքային համախմբությունը հանդիսանում է գլխավոր համախմբություն հաջորդ փուլի համար կոչվում են **բազմաստիճան ընտրանքներ:**

Բազմաստիճան ընտրանքի իրականացման փուլերը կոչվում են **ընտրանքային աստիճաններ:**

*Բազմաստիճան ընտրանքների յուրաքանչյուր աստիճանում փոփոխվում է ընտրության միավորը:*

Յուրաքանչյուր ոչ վերջին աստիճանում ընտրության միավորները կոչվում են **բներ:**

Այն ընտրանքները, որոնց իրականացումը պահանջում է վերը նշված տարբեր ընտրանքների համատեղում կոչվում են **համակցված ընտրանքներ:**

*Ընտրանքային համախմբության բաշխումը ըստ շերտերի և բների կատարվում*



*է տարբեր աստիճաններում համաչափ հետազոտության նպատակի, թե ընտրանքում ինչպիսի միավորների ներկայացման անհրաժեշտությունն է առաջնահերթ:*

Այն ընտրանքները, որոնց գլխավոր համախմբությունը որևէ տարածքի բնակչությունն է և ընտրությունը կատարվում է ըստ դիտարկման միավորների բնակվելու վայրի կոչվում են **տարածքային ընտրանքներ:**

**Օ ր ի ն ա կ՝** *Երթուղային հարցման եղանակը համակցված տարածքային ընտրանքի օրինակ է հանդիսանում: Այդպիսի ընտրանքների պարզեցված ձևը՝ չորսաստիճան շերտավորված ընտրանքն է որտեղ երթուղիները, շենքերը, բնակարանները տարբեր աստիճաններում հանդես են գալիս որպես բներ: Շերտավորումը կատարվում է ըստ երթուղու երկարության:*

Ըստ շարժունակության հատկանիշի՝ տարածքային ընտրանքի օբյեկտը (այսինքն՝ գլխավոր համախմբությունը՝ բնակչությունը) դասակարգվում է հետևյալ դասերի՝ առկա բնակչություն, մշտական բնակչություն, ժամանակավոր բացակայող բնակչություն, ժամանակավոր բնակվող բնակչություն:

*Տարածքային ընտրանքների համար որպես ընտրանքի հիմք գերադասելի է կիրառել սոցիալական քարտեզը:*

*Լոկալ սոցիալական քարտեզի կառուցման եղանակներից է տարածքի սեգմենտավորումը, որը շերտավորման յուրահատուկ ձև է:*

## Օգտագործված գրականության ցանկ՝


1. Рабочая книга социолога. Под ред. Осипова Г. В., М., 1983г.
2. Шварц В. Выборочное исследование, Москва, 1989г.
3. Ядов В. А. Стратегия социологического исследования, М., 1998г.
4. Barnett V. Elements of Sampling Theory, 1987
5. Deming W. Sample Desine in Business Research, Milwaukee, 1991
6. Hess I. Sampling for Social Research Surveys, Univ. of Michigan, 1985
7. Kalton G. Introduction of Survey Sampling, Newbury Park, Sage, 1983
8. Raj D. The Desine of Sample Surveys, N.Y. 1989


An evaluation version of novaPDF was used to create this PDF file.
Purchase a license to generate PDF files without this notice.